

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Վերջ Տալ Քոչարեանի Դատավարութեան Զաւեշտին

Հայաստանի Գախագահի պաշտօնը վարած Ռոպերթ Քոչարեանի դատավարութիւնը կը շարունակէ մնալ նոյն կէտի վրայ: 2008-ի Մարտի 1-ի արիւնքի դէպքերու գոհերու իրաւաջողորները եւ անոնց փաստաբանները որոշած են պոյթօթել դատական նիստերը՝ յայտարարելով որ չեն ուզեր մասնակից ըլլալ տեղի ունեցող զաւեշտին:

Քոչարեանի դատավարութիւնը պաշտօնապէս սկսաւ 2019-ի Մայիսին, սակայն անկէ ասդին դատարանէն ներս տեղի ունեցող իրադարձութիւնները եւ պարզուած պատկերը պատիւ չեն բերեր որեւէ երկրի դատական համակարգին: Նիստերու ընթացքին կը տիրէ քառասյին վիճակ, ուր կը բացակային կարգ ու կանոն եւ դատավարական սահմանուած օրէնքներ: Քոչարեանի պաշտպանները մերթ կը վիճին դատախազներուն հետ, մերթ՝ գոհերու հարազատներուն եւ անոնց փաստաբաններուն հետ եւ երբեմն ալ վիրաւորական խօսքեր կ'ուղղեն դատաւորին անձնապէս, առանց ենթարկուելու լուրջ պատասխանատուութեան:

Սակայն, բուն հարցը կը կայանայ ի՞նչ, որ Քոչարեանի փաստաբանները ամիսներէ ի վեր կը դիմեն տարբեր հնարքներու, առիթ չտալով որ դատախազներ աւարտեն ամբաստանագրի ընթերցումը եւ ապա անցնելու համար վկաներուն: Անցնող ամիսներու ընթացքին Քոչարեանի փաստաբանները շահագործելով միջնորդութիւններ ներկայացնելու իրենց իրաւունքը, դիմած են մօտ 100 ման դատական քայլերու: Քոչարեանի խափանման միջոցը փոխելու պահանջելով, դատաւորին նկատմամբ անվստահութիւն յայտնելով, դատախազի նկատմամբ անվստահութիւն յայտնելով, փաստաբաններէն մէկու եւ կամ միւսի բացակայութիւնը պատրուակ բռնելով, ամբաստանելի առողջական վիճակը պատճառաբանելով եւ այլ մեծ ու փոքր հարցերով միջնորդութիւն կատարելով, պաշտպանները կը յաջողին շարունակաբար ձգձգել դատական նիստերը: Իւրաքանչիւր ման միջնորդութեանէն ետք, դատաւորը փոխանակ տեղոյն վրայ որոշում կայացնելու, մէկ կամ արեւելի շաբաթով կը յետաձգէ նիստը:

Քոչարեան իր կողքին ունին 5-6 փաստաբաններ, որոնք առատածեռ կը վճարուին Հայաստան

Շար.ը էջ 6

Արայիկ Յարութիւնեան. Ղարաբաղեան Հարցի Լուծման Հնարաւորութիւն Զենք Տեսներ



Արայիկ Գախագահ Արայիկ Յարութիւնեան մամլոյ ասուլիսի ընթացքին

Արցախի անկախութեան տարեդարձին առթիւ կայացած մամլոյ ասուլիսի ընթացքին նախագահ Արայիկ Յարութիւնեան յայտարարեց, որ տասնամեակներ են, եւ այս հարցի լուծման հնարաւորութիւնը շատ ցած հաւանականութիւն ունի: Ի պատասխան այն հարցին, թէ ինչն է առանցքային քաղաքական կողմը հարց կարգաւորման համար, ան նշեց. - «Այս օրը՝ հենց անկախութեան օրը, դրա խորհրդանիշն է, ի հարկէ, մենք քաղաքագէտների հետ քննարկել ենք՝ ճիշդ էր անկախութեան հռչակումը, թէ միացման ճանապարհն աւելի կարճ կը լինէր, բայց այն ժամանակուայ մեր քաղաքական ղեկավարութիւնը, ի դէպ, նշեմ, որ շատ կարեւոր ժամանակին ճիշդ ճանապարհ ու ուղղութիւն է ընտ-

րել՝ անկախութիւնն այս փուլում, իսկ հետագայում ի հարկէ մեր վերջնական նպատակը միասնական հայրենիք ունենալն է Հայաստանի հետ»:

Միաժամանակ Արայիկ Յարութիւնեան ընդգծեց, որ պէտք է նաեւ իրատես ըլլալ: «Գիտենք, որ տասնամեակներում այս հարցի լուծման հնարաւորութիւնը շատ ցածր հաւանականութիւն ունի, հնարաւոր չի, չենք տեսնում դա, դրա համար մեր բանակի հզօրացման շնորհիւ պարտադրել հակառակորդին հաշուի նստել արցախեան հայկական ուժի հետ, «սթաթուս բոն» ներայ իրավիճակը պահպանել մինչեւ աշխարհաքաղաքական մեծ զարգացումներ, որը հնա-

Շար.ը էջ 5

Ռուսական Մամուլը Կը Պնդէ, Որ Թուրքիան Ատրպէյճան Ուղարկած Է Սուրիացի Զինեալներ

Ռուսաստանեան մամուլը կը շարունակէ չամառօրէն պնդել, որ Թուրքիան Ատրպէյճան ուղարկած է սուրիացի զինեալներ, համալրելու հայ-ատրպէյճանական սահմանին վրայ փաստացի գոյութիւն ունեցող թրքական ռազմական նր: Այդ մասին հերթական մանրամասնութիւններ հրատարակած է ռուսաստանեան անկախ պարբերականներէն մէկը՝ «Նեզավիսիմաեա Գագեթա»-ն:

Թերթը, վկայակոչելով իր աղբիւրները, կը յայտնէ, որ Անգարան Ատրպէյճան ուղարկած է 500 սուրիացի զինեալներ՝ հիմնականօրէն էթնիկ թուրքներ «Սուլթան Մուրատ», «Սուրիական ազատ բանակ» եւ «Համգաթ» զինուած իմբաւորութիւններէն: Պարբերականի աղբիւրները կը պնդեն, որ տեղեկատուութիւնը կը ստուգուի, եւ առաւել հաւանական է, որ կը

համապատասխանէ իրականութեան:

Թերթը կը լիչեցնէ հայ-ատրպէյճանական սահմանին յուլիսեան բախումներուն յաջորդած Պաքուի ցոյցը, որուն մասնակիցները Թուրքիոյ կոչ կ'ընէին «փրկելու Ատրպէյճանը հայերէն եւ ռուսերէն»:

Թուրքիոյ դրօշակը ծածանելով, ցուցարարները իջնամ Ալիեւէն կը պահանջէին «թրքական ռազմական տեղակայել երկրին մէջ եւ վրէժ լուծել հայերէն»:

Թրքական հեռատեսիլային ընկերութիւնները ցոյցերու այդ տեսերիզները աշխուժօրէն կը շրջանառէին, սակայն պաշտօնական Մոսկուան, որեւէ կերպով չէր արձագանգած անոր:

«Նեզավիսիմաեա Գագեթա»-ն կը մէջբերէ ռուսաստանցի արեւելագէտ Իկոր Տմիթրիւեի խօս-

Շար.ը էջ 5

Մարտ 1-ի Զոհերու Հարազատներն Ու Պաշտպանները Զեն Մասնակցի Դատական Նիստերուն

Մարտ 1-ի զոհերու իրաւաջողորները եւ անոնց ներկայացուցիչները կը դադարեցնեն ֆիզիքական մասնակցութիւնը դատական նիստերուն: «Արմէնփրես»-ի փոխանցումով՝ այս մասին Սեպտեմբեր 7-ի մամուլի ասուլիսի ընթացքին ըսաւ Մարտ 1-ի զոհերու իրաւաջողորներու փաստաբան՝ Տիգրան Եկորեան:

«Այժմ, երբ նախաքննութիւնն, ըստ էութեան, դադարեցուած է Մարտ 1-ի հիմնական գործով, իսկ դատաքննութիւնը վերածուել է թանկարժէք ժամավաճառութեան եւ զաւեշտի, դատարանի բակում եւ դատական նիստերի դահլիճում տիրում է կամայականութիւնն ու թողտուութիւնը, որն ուղղուած է սահմանադրութեամբ հռչակուած արժէքների եւ իրաւունքների դէմ եւ արժանանում է բարձր հանդուրժողականութեան, իսկ նախագահող դատաւորն իր իշխանութիւնը կարողանում է կարծես իրականացնել միայն սուբյեկտի իրականացմանը միջոցառմամբ, մենք դադարեցնում ենք մեր ֆիզիքական մասնակցութիւնն այդ անբովանդակ միջոցառմանը», - ըսաւ Եկորեան:

Ան նշեց, որ իրենց չմասնակցելը պիտի չնպաստէ, որ գործը ընթանայ այս կամ այն ուղղութեամբ:

Շար.ը էջ 4

Հայաստանի Արտաքին Պետական Պարտքը Հասած Է 6 Միլիարդ

Հայաստանի արտաքին պետական պարտքը այս տարուայ Յունիս 30-ի դրութեամբ տարեկան համեմատ աճած է 3-4 տոկոսով: Յունիս 30-ի դրութեամբ արտաքին պետական պարտքը կազմած է 5 միլիարդ 981.646 միլիոն տոլար, իսկ Դեկտեմբեր 31-ի դրութեամբ ան կազմած էր 5 միլիարդ 784.518 միլիոն տոլար:

Վիճակագրական կոմիտէի տեղեկացումով՝ անոր կարգին՝ ՀՀ կառավարութեան պարտքը կը կազմէ 5 միլիարդ 506.636 միլիոն տոլար:

Վարկատու միջազգային կազմակերպութիւններէն առաջինը Համաշխարհային դրամատունն է, որուն Հայաստանի պարտքը կը կազմէ 1 միլիարդ 796.694 միլիոն տոլար, յաջորդը՝ Զարգացման միջազգային ընկերակցութիւնը եւ վերակառուցման եւ զարգացման միջազգային դրամատունը:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Նախկինների Զիննական Թշնամին Ժողովրդավարութիւնն է

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տարօրինակ բաներ են տեղի ունենում Հայաստանում: Ռոբերտ Քոչարեանը փորձում է դրսից Հայաստանի վրայ «փափուկ ուժ» բերելով վերադառնալ քաղաքականութիւն ու իշխանութիւններին մեղադրում է կոռուպցիայի մէջ, Գագիկ Ծառուկեանը պատրաստուում է մեծ հանրահաւաք կազմակերպել կրթութեան թեմաներով, Սերժ Սարգսեանի երիտահանրապետականներն իրենց օրակարգն են առաջ քաշում՝ «Հայաստանն առանց Նիկոլի» եւ «Հայաստանը Նիկոլից չետոյ», Վանեցեան Արթուրը փորձում է այդ համընդհանուր թոհոստում իր տեղը գտնել, Դաշնակցութիւնը յարմար պահի է սպասում...

Իսկ ամենատարօրինակն այն է, որ այս ամէնը ներկայացնում է որպէս քաղաքական պայքար: Իբր՝ հանրութեան մէջ իշխանութիւնների նկատմամբ դժգոհութիւնն ու հիասթափութիւնն աճում են, իսկ իրենք՝ «քաղաքական ուժերը» մտադիր են այդ տրամադրութիւնների շնորհիւ սահմանադրական ճանապարհով հասնել իշխանափոխութեան: Պարզ ասած՝ սկզբի համար իրականացնել «Հայաստանն առանց Նիկոլի» ծրագիրը:

Աշխարհի որեւէ երկրում որեւէ իշխանութիւն, իհարկէ, յաւերժ չէ: Պարզապէս ժողովրդավարական երկրներում իշխանափոխութեան մեխանիզմները շատ յստակ են: Ժողովուրդն ընտրութիւնների ժամանակ իր ձայնը տալիս է այս կամ այն քաղաքական ուժին, առաւելագոյն ձայներ ստացած քաղաքական ուժը ստանձնում է իշխանութիւնը, եւ թէ՛ յետագայում չի արդարացնում մարդկանց վստահութիւնը՝ յաջորդ ընտրութիւնների ժամանակ մարդիկ գործող իշխանութիւնների փոխարէն ընտրում են այն ուժին, որի հետ աւելի մեծ յոյսեր են կապում: Սա է ժողովրդավարութիւնը (բնականաբար՝ բաւականին պարզեցուած ընկալմամբ), եւ հասարակութեան մեծամասնութեան ցանկութիւնն է, որ Հայաստանում իշխանութիւնները միշտ ձեւաւորուեն հենց այս սկզբունքով: Ու հազիւ թէ որեւէ ողջամիտ մարդ հակադրուի սրան՝ անկախ նրանից, ինքնիշխանութիւնները՝ համակիրն է, թէ ընդ-

դիմադիր որեւէ ուժի: Բայց ուշադրութիւն դարձրէք՝ այս սկզբունքի անվերապահ կիրառման դէպքում ոչ Քոչարեանն իր ստեղծած կառուցներով, ոչ Սերժ Սարգսեանն իր ՀՀԿ-ով, ոչ Գագիկ Ծառուկեանն իր ԲՀԿ-ով Հայաստանում իշխանութեան հասնելու որեւէ շանս պարզապէս չունեն: Որովհետեւ որքան էլ հասարակութիւնը հիասթափուի գործող իշխանութիւններից, միեւնոյն է՝ իրավիճակի բարելավման յոյսն այդ ուժերի հետ չի կապելու: Այլ կերպ ասած՝ «Հայաստանն առանց Նիկոլի»-ն եւ «Հայաստանը Նիկոլից չետոյ»-ն, իհարկէ, վաղ թէ ուշ գալու է, բայց այդ «չետոյում» նշուած ուժերն իրենց տեղը չեն ունենալու: Որովհետեւ թէ՛ տեղ ունենան՝ դա կը լինի վերադարձ դէպի «Հայաստանը Նիկոլից առաջ», ինչը հասարակութիւնը կը մերժի միանշանակ:

Հասկանո՞ւմ են արդեօք Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը, որ ժողովրդավարական ճանապարհով իրենց վերադարձը բացառուած է, ու չեն օգնի ոչ իրենց ֆինանսական ռեսուրսներն ու քարոզչամիջոցները, ոչ էլ Ծառուկեանի ասնէք թէ համապատասխան լիարժէք հանրահաւաքները: Ամենայն հաւանականութեամբ՝ հասկանում են: Նրանք գիտեն, որ կայուն ներքաղաքական իրավիճակում ընտրութիւնների միջոցով իշխանութեան հասնելն անհնար է (նոյնիսկ իրենց իշխանութեան տարիներին չէին կարողանում անհրաժեշտ ձայներ հաւաքել), դրա համար էլ նրանց պէտք են ցնցումներ եւ ֆորսմաժօրային իրավիճակներ: Իսկ այդքանը կազմակերպել հաստատ կարող են: Ու բնականաբար՝ այդ ուղղութեամբ էլ աշխատում են: Ծրագիրը հասկանալի է. ցնցումների միջոցով հասնել կառավարութեան հրաժարականին, իսկ յետոյ, արդէն որպէս «յաղթած ուժեր», կազմակերպել այնպիսի «ընտրութիւններ», որոնց ակնատեսն ենք եղել առնուազն երկու տասնամեակ, ու իրենք իրենց յաղթող հռչակել: Յետո՞յ ինչ, որ ժողովրդավարական երկրներում դա կոչուում է պետական յեղաշրջում: Իսկ ուրիշ ի՞նչ յօրինեն, եթէ ժողովրդավարական կանոններով իրենց նպատակին հասնելու շանս չունեն: «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Դաւիթ Տոնոյեանը Մոսկուայում Ներկայացրեց Զայաստանի Յաղթանակը

ՅԱԿՈՒԲ ԲԱԳԱՆԵԱՆ

Կովկասում անվտանգութիւնը համաշխարհային անվտանգութեան շղթայ է եւ ռեգիոնալ անվտանգութեան համակարգի իւրաքանչիւր սպառնալիք եւ ապակայունացման ռիսկ սպառնալիք ու ռիսկ է միջազգային անվտանգութեան համար:

Այդ մասին Մոսկուայում երեք կազմակերպութիւնների՝ ՀԱՊԿ, Շանհայի գործակցութեան կազմակերպութիւն, եւ ԱՊՀ պաշտպանութեան նախարարների համատեղ հաւաքի իր ելոյթում յայտարարեց Հայաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Տո-

նոյեանը: Նա անվտանգային լայն միջավայրի հաւաքում փաստացի էլ աւելի ընդլայնեց անվտանգութեան սահմանը, չիշտակելով նաեւ, որ Հայաստանի անվտանգային «աշխարհաքաղաքական բնագիծը» լոկ Կովկասը կամ եւրասիական տիրոջթը չէ, այլ նաեւ Միջերկրծովեան ռեգիոնն ու Մերձաւոր Արեւելքը: Այլ կերպ ասած, Մոսկուայում եւրասիական երեք կազմակերպութիւնների հաւաքի իր ելոյթում Հայաստանի պաշտպանութեան նախարարը բաւականին պարզորոշ ազդարարեց, որ Հայաստանը անվտանգային միջազգային համակարգը չի կառուցում բաժանարար գծերով, այլ

Ձեր Խեղճութիւնն Այլեւս Կարեկցանք Չի Առաջացնում

ԱՌԻՍ ՎԱՂԱՐՇԱԿԵԱՆ

Երկու տարի է, ինչ լսում ենք միեւնոյն պնդումը՝ իշխանութիւնների դէմ յայտարարուած է մեղիա պատերազմ: Իհարկէ, դա իրողութիւն է դա չտեսնելը՝ անհնար: Բայց գաւեշտալի է եւ միայն կարեկցանք է առաջացնում, թէ ինչպէս են դա ասում իշխանութիւնները եւ ինչ հակաքայլեր են արել երկու տարիների ընթացքում:

Ասում են ձայնի նոյն տոնայնութեամբ, ինչ ասում էին ընդդիմութիւն եղած ժամանակ, երբ բարձրաձայնում էին, որ հեռուստատեսային եթերը փակուած է իրենց համար եւ նշում էին, որ նախագահականում կայ սեւ ցուցակ, թէ ում է ի կարելի հրաւիրել հեռուստատեսութիւն եւ յատկապէս՝ Հանրային հեռուստաընկերութիւն:

Երկու տարուց աւել է, ինչ իշխանութիւն էք, մի տեսակ արդէն սազական չէ ստատիստի եւ բողոքաւորի դերը: Հայաստանի ամենամեծ պիւստձէյով հեռուստաընկերութիւնը ձեր տրամադրութեան տակ է: Ի՞նչ էք արել՝ ՉախՉախելու նախկին իշխանութիւնների ներկայ եւ նախկին մանիպուլացիաները: Ի վերջոյ, ձեր տրամադրութեան տակ է ամենամեծ վիտեօ արխիւը, ի՞նչ էք արել, որ հանրութեանը ներկայացնէք նախկինների յանցագործութիւնները:

Լաւ է, գոնէ Տիրգրան Պասկիւլիչեանը ժամանակին «Կորսուած Գարունը» նկարահանեց, հակառակ պարագայում երեւի 5-րդ ալիքի ֆիլմը ցուցադրէիք, վերջում էլ փոքր տիտրերով գրէիք՝ մենք փող չունենք, որ հակադրաձենք քոչարեանական պրոպագանդային:

Այսօր արդէն մի ամբողջ սերունդ է մեծացել, որ լաւ տեղեակ

դիտարկում է այդ համակարգն ու դրան առանձին սպառնալիքները:

Այդ իմաստով, Հայաստանի անվտանգային շահերի եւ միաժամանակ դերի ու պատասխանատուութեան տիրոջթում Դաւիթ Տոնոյեանը մատնանշեց սպառնալիքը՝ թուրքական հաւակնութիւն մի քանի ռեգիոնների նկատմամբ: Միաժամանակ, այդ արձանագրումը Տոնոյեանն արեց որպէս լոկալ, սակայն տպաւորիչ ռազմական յաղթանակ արձանագրած բանակի եւ պետութեան պաշտպանութեան նախարար, փաստացի Հայաստանի անվտանգային պատկերացումն ու պատասխանատուութիւնը ներկայացնելով հանդերձ, դէ ֆակտօ ներկայացնելով այդ յաղթանակը եւ յաղթողի դիրքը:

Այդ իմաստով, պաշտպանութեան նախարարը Մոսկուայի իր ելոյթում չմտաւ որեւէ սուբլիմալի, անգամ թուրքիայի հետ «ուղիղ բանավէճի» մէջ, թերեւս ընդգծելու համար, որ Հայաստանն իրապէս գբաղուած է ոչ միայն իր անվտանգութեան եւ հարցերի, այլ հենց գլոբալ անվտանգութեան ինդիքների դիտարկումով եւ հակական յաղթանակը Կովկասում՝ լինի մեծ, թէ փոքր, գործնականում գլոպալ անվտանգութեան յաղթանակն է՝ եւրաստլանտեան տարածութիւնից մինչեւ եւրասիական գօտի:

«ԼՐԱԳԻՐ»

չէ Հոկտեմբերի 27-ի խուժերին: Ինչո՞ւ մի ֆիլմ չէք նկարահանում եւ նոր սերնդին ներկայացնում, որ իրեն միակ տղամարդ յորջորջողը Հոկտեմբերի 27-ից առաջ ամենեւին էլ միակ տղամարդ չէր չիչեցնում, այլ աւելի շուտ անկիւն կանգնեցուածի էր նման:

Ինչո՞ւ մի ֆիլմ չէք նկարահանում, որտեղ մանրամասն կը ներկայացնէք, թէ իրենց ազգային յորջորջող ուժերը որքան «սորոսական» կոնուենցիաներ են վաւերացրել:

Ինչո՞ւ մի ֆիլմ չէք նկարահանում, որտեղ կը բացայայտէք, թէ Քոչարեանը եւ Սարգսեանը ինչ են բանակցել Արցախի վերաբերեալ, ժամանակին ինչպէս են շահարկել այդ հարցը իշխանութեան գալու համար եւ յետոյ ինչ են պատրաստ եղել ստորագրել:

Ինչո՞ւ մի ֆիլմ չէք նկարահանում Երեւանի տարածքների ապօրինի սեփականաշնորհման մասին: Նոյնը՝ հանքերի վերաբերեալ:

Ինչո՞ւ չէք անդրադառնում Մանուէլի, Լիսկայի, Վարդանիկի, նոյն Ծառուկեանի՝ իրենց բղէշ-խուժիւններում երկար տարիներ տիրած բարքերին: Մարդկանց պատմէք, թէ նրանք ինչ մեծահոգի եւ հոգատար ֆէոտալներ էին:

Այնպէս որ՝ դադարէք հիբրիդային պատերազմի մասին ձեր դատողութիւններն անընդհատ տիրաժաւորելն ու փորձէք հասկանալ, թէ ինչ կարող էք հակադրել դրան: Ձեր Խեղճութիւնն այլեւս կարեկցանք չի առաջացնում:

«ՁՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏՍԱԹԵՐԹ՝
ՍՈՅՐԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Լիտիան Արմենիա»-ի Պահակները Ծեծի Ենթարկած Են Բնակիչներուն



Բնապահպաններու մէկ ցոյցը Ամուլսարի հանքի շահագործման դէմ

«Լիտիան Արմենիա»-ի վերջերս վարձակալած VIP Guard Security ընկերութեան պահակները գիշերը յարձակած են Ամուլսարի պահպանութիւնը կատարող յարակից բնակավայրերու բնակիչներուն վրայ, առեւանգած անոնցմէ առնուազն մէկուն եւ դաժան ծեծի ենթարկած: Ծեծի ենթարկուողներէն մէկը յաջողած է պահանջներէն ազատիլ ու շարունակել իր կեանքը, զէպքին վայրը ոստիկաններու ու ջերմուկցիներու ժամանելէն ետք միայն, «Ազատութիւն»-ին հետ գրոցի ընթացքին ըսաւ Ջերմուկի բնակիչ, Ամուլսարի հանքի շահագործման դէմ հանդէս եկող՝ Շիրակ Բունիաթեանը:

Տեղի ունեցածի վերաբերեալ յայտարարութեամբ հանդէս եկած է նաեւ Հայկական բնապահպանական ճակատը, նշելով, որ «Լիտիան

Արմենիա»-ի վարձակալած պահանորդական ծառայութեան աշխատակիցներու ծեծի հետեւանքով «Ամուլսարի պահպաններէն քանի մը հոգի հիւանդանոց փոխադրուած են»:

«Լիտիան Արմենիա» ընկերութեան իրաւաբանական գծով ղեկավար՝ Խորէն Նասիբեան «Ազատութիւն»-ի հետ գրոցի ընթացքին պնդեց, թէ պահանջները պաշտպանած են ընկերութեան տարածքը օրէնքի ծիրէն ներս:

Խորէն Նասիբեան ըսած է թէ ներխուժում տեղի ունեցած է, հաւանաբար ոչ սթափ վիճակի մէջ, մի խումբ անձերու կողմէ, որոնք փորձած են սադրել: Նաեւ քարեր նետած են: Անկէ յետոյ տարածքի ներսէն ներխուժումը կանխուած է պահանջարկային ընկերութեան ներկայացուցիչներու կողմէ:

«ԲՀԿ»-ն կը Գտնուի Այլ Քաղաքական Ուժի Ազդեցութեան Տակ. Լիլիթ Մակունց

Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար՝ Լիլիթ Մակունց կը կարծէ, թէ Բարգաւաճ Հասարակական կուսակցութիւնը չ'առաջնորդուիր սեփական քաղաքական օրակարգով եւ կը գտնուի որոշակի քաղաքական ուժերու ազդեցութեան տակ: Ըստ Մակունցի՝ արդիւնքը կանխատեսելի է:

«Ես կարծում եմ՝ ինչպէս 2015-ին «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը չէր առաջնորդուում իր սեփական քաղաքական, կուսակցական օրակարգով, այլ գտնուում էր այլ քաղաքական ուժերի ազդեցութեան տակ, այնպէս էլ այսօր նոյն իրավիճակն է»:

Այն հարցին, թէ ո՞ր ուժերու ազդեցութեան տակ կը գտնուի ԲՀԿ-ն, Մակունց արձագանգեց՝ տարբեր եւ չի շեղուց մամուլ այն ժամանակուայ հրապարակումները:

Անդրադառնալով արտակարգ իրավիճակի վերաբերեալ նոր օրինագիծին՝ Մակունց նախ նշեց, թէ արտակարգ դրութիւնը կը վերանայ, եւ արտակարգ իրավիճակի ռեժիմը պէտք է գործէ:

«Քանի որ, այնուամենայնիւ, համաճարակի ընթացքը դեռեւս այն մակարդակի չէ, որով մենք հնարաւորութիւն ունենանք ընդհանրապէս վերացնել բոլոր սահմանափակումները, անհրաժեշտ են որոշակի օրէնքներ, որոնք հնարաւորութիւն կ'ընձեռեն վերահսկողութեան տակ պահել, մասնաւորապէս՝ դիմակները կրման եւ մնացեալ կանոնների կարգաւորումների հետ կապուած»:



«Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար՝ Լիլիթ Մակունց

Մակունց անտեղի համարեց այն յայտարարութիւնները, թէ արտակարգ դրութեան ընթացքին խաղող հաւաքներու սահմանափակումը քաղաքական դրդապատճառներ ունէր:

«Ընդդիմադիր քաղաքական ուժերը ունեն նաեւ այլ հարթակներ եւ հնարաւորութիւններ այս պահին իրենց խօսքը հանրութեանը հասանելի դարձնելու, դիտարկումները, քննարկումները հնչեցնելու: Ընդ որում, խորհրդարանական ընդդիմութիւնն իր խօսքը հնչեցնելու հնարաւորութիւն ունի Աժ լիազուժար նիստերի դահլիճից, մամուլի միջոցով, խորհրդարանական ընդդիմադիր ուժերից մէկն էլ ունի հեռուստատեսութիւն, որի միջոցով կարողանում է իր ուղերձները յղել»:

Ալեն Սիմոնեան Կ'առաջարկէ Դինգ Անգան Աւելցնել Զրպարտութեան Եւ Վիրաւորանքի Պարագային Փոխհատուցման Գումարը

Ազգային ժողովի փոխ խօսնակ՝ Ալեն Սիմոնեան կ'առաջարկէ ընկերային ցանցերու եւ լրատուամիջոցներու մէջ հրապարակուած վիրաւորանքի եւ զրպարտութեան համար փոխհատուցման չափը վիրաւորանքի պարագային 1 միլիոն դրամէն դարձնել 5 միլիոն դրամ, իսկ զրպարտութեան պարագային՝ 2 միլիոնէն 10 միլիոն դրամ:

Ալեն Սիմոնեան կը կարծէ, որ այս ամէնը կը գապէ այն մարդիկը, որոնք «գայթակղութեան զնալով տարածում են սոսոյս տեղեկութիւններ», ինչպէս նաեւ որոշ չափով կ'ազատէ քաղաքացիները «համացանցի աղբէն»:

Սիմոնեանի խօսքով՝ այս քայլն անհրաժեշտ է, ինչ որ չափով ալ ուշացած:

Նախագիծը Սեպտեմբեր 7-ին քննարկուած է Աժ պետաիրական հարցերու յանձնաժողովի կողմէ եւ կը քննարկուի Աժ լիազուժար նիստին:

«Գտնում եմ, որ այդ քննարկումը կարեւոր է եւ պէտք է 2021-ին Տեսանելի Կը Դառնան Ապօրինի Գոյքի Բռնագանձման Գործընթացները

Ապօրինի գոյքի բռնագանձման գործերով դատախազութեան ներս համապատասխան ստորաբաժանումը ձեւաւորուեցաւ, ինչ որ կը նշանակէ, որ օրէնքը մտաւ ուժի մէջ: Լրագրողներուն հետ ձեպագրոցի ընթացքին ըսաւ Արդարադատութեան նախարար՝ Ռուստամ Պատասեան:

«Դատախազութեան յատուկ ստորաբաժանումը արդէն կարող է, ստանալով համապատասխան հիմքերը, որոնք սահմանուած էին օրէնքում, սկսել ուսումնասիրութիւնները: Բայց ինչպէս նախկինում, այնպէս էլ հիմա, ես այն կարծիքին եմ, որ այդ ուսումնասիրութիւններն այնքան ծաւալուն են, որ ակնկալել 2021 թուականի առաջին եռամսեակից շուտ որեւէ հայց կը գնայ դատարան, կարծում եմ՝ սխալ կը լինի», - ըսաւ նախարարը:

Ըստ Պատասեանին՝ այս փուլին, դատախազութեան ներս պի-



Ազգային ժողովի փոխ խօսնակ՝ Ալեն Սիմոնեան

ապահովի աւելի լայն մասնակցութիւն: Կ'ուզենամ լսել «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան, «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան, ինչպէս նաեւ «Իմ քայլ» պատգամաւորների կարծիքները», - ըսած է Սիմոնեան:



Արդարադատութեան նախարար՝ Ռուստամ Պատասեան

տի ընթանայ այն աշխատանքը, որ հանրութեան համար տեսանելի չէ, իսկ տեսանելի հատուածին ակա-նատես կ'ըլլանք 2021 թուականի ընթացքին:

Սեղադրանք՝ Երեւունի Դամայնքի Նախկին Ղեկավար Միեր Սեդրակեանի Դէմ

Պարզուած են Երեւանի էրեբունի համայնքի նախկին ղեկավար՝ Հանրապետական ՄՏԵՐ Սեդրակեանի կողմէ պաշտօնէական լիազօրութիւնները չարաշահելու դէպքերու շարք մը հանգամանքներ, կը յայտնէ Քննչական կոմիտէն (ՔԿ):

Ըստ ՔԿ-ի տարածած հաղորդագրութեան, քննութեամբ ձեռք բերուած տուեալներու համաձայն՝ ՄՏԵՐ Սեդրակեան, 1999-2008 թուականներուն, գրաւելով Երեւանի էրեբունի համայնքի ղեկավարի պաշտօնը, լիազօրուած ըլլալով կատարելու կազմակերպական-սնորհական եւ վարչատնտեսական գործառնչութիւններ, չարաշահելով իր պաշտօնէական լիազօրութիւնները, դիտաւորութեամբ՝ չէ կատարած իր ծառայողական պարտականութիւնները:

Սեդրակեան, պաշտօնէական դիրքը ծառայութեան շահերուն հակառակ օգտագործելով, համայնքի աւագանիի անդամներու օժանդակութեամբ, Երեւան քաղաքի էրեբունի համայնքի սեփականութիւնը հանդիսացող՝ «Վարդավառ զբօսայգի» տարածքը գտնուող ընդհանուր 12035.5 քմ. հողատարածքը օտարած է որդուն եւ եղբորը, որու հետեւանքով նշուած հողատարածքը դուրս եկած է համայնքի սեփական ֆոնտէն, որ անգրաւութեամբ առաջացուցած է ծանր հետեւանքներ:

ՄՏԵՐ Սեդրակեանին մեղադրանք առաջադրուած է՝ ՀՀ քրէական օրէնսգրքի 308-րդ յօդուածի (պաշտօնէական լիազօրութիւնները չարաշահելը) 2-րդ մասով: Անոր նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրուած է ստորագրութիւն՝ չհեռանալու մասին:

ԼՈՒՐԵՐ

Վարչապետը Տիկնոջ Հետ Այցելած Է Տաւուշի Սահմանապահ Համայնքներ



Նիկոլ Փաշինեանի գլխավորած պատուիրակութիւնը Տաւուշի սահմանամերձ համայնքներ այցելութեան ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան տիկնոջ՝ Աննա Յակոբեանի հետ այցելած է Տաւուշի մարզի սահմանամերձ համայնքներ: Կառավարութեան ղեկավարին ուղեկցած են Տարածքային կառավարման եւ ենթակառուցումների նախարար՝ Սուրէն Պապիկեան, Տաւուշի մարզպետ Հայկ Չոպանեան եւ Քաղաքաշինութեան կոմիտէի նախագահի պարտականութիւնները կատարող՝ Արմէն Ղուլարեան:

Նիկոլ Փաշինեան եւ տիկին Յակոբեան նախ եղած են Չինարի համայնքը, ուր հանդիպած են տեղւոյն բնակիչներուն հետ, լսած անոնց խնդիրներն ու պատասխանած տարբեր հարցերուն:

Վարչապետը շնորհակալութիւն յայտնած է յուլիսեան յաղթական մարտերու կապակցութեամբ: Ան ըսած է թէ Ձինուած ուժերը եթէ չիմանային, որ իրենք ամուր թիկունք ունին, այդքան ուժեղ եւ դուխով չէին ըլլար:

«Երկրորդն էլ, այո՛, մեր վերաբերմունքն այն է, որ այս իրավիճակներում պետութիւնը պէտք է կարողանայ իր պարտավորութիւնները յստակ կատարել: Մեր պետական աջակցութիւնն ընդհանրապէս պէտք է կազմակերպենք այնպէս, որ մարդկանց ոչ թէ գրկի որեւէ բան անելու շարժառիթից, այլ հակառակը՝ քաջալերի: Որովհետեւ հիմա, այսպէս ասած, «բարեգործական» տրամաբանութիւնը շատ յաճախ վնասակար է: Շատ կարեւոր է, որ մենք կարողանանք պետութեան եւ քաղաքացու պարտավորութիւնների ճիշդ հաւասարակշռութիւն ձեւակերպել՝ ի՞նչն է

պետութեան պարտավորութիւնը, ի՞նչն է քաղաքացու պարտավորութիւնը», - նշած է վարչապետը:

Խօսելով սահմանապահ գիւղերու համար ստեղծուող հնարավորութիւններու մասին՝ կառավարութեան ղեկավարը ըսած է, որ փոփոխութիւն կատարուած է այստեղ աշխատող կանանց համար. վերջիններս երեխայ ունենալու պարագային ամսական կը ստանան 50000 դրամ՝ որպէս երեխայի խնամքի վճար, իսկ աշխատող մայրերը՝ 26000:

Այնուհետեւ վարչապետն ու Աննա Յակոբեան այցելած են Մովսէս համայնք: Սուրբ Աստուածածին եկեղեցու բակը հանդիպած են բնակիչներուն հետ, ուր քննարկուած է գիւղին մէջ կատարուող ճանապարհաշինական աշխատանքներու ընթացքը:

Նիկոլ Փաշինեանի յաջորդ կանգաւոր եղած է սահմանապահ Այգեպարը: Այստեղ կը հիմնանորոգուին կամ ամբողջովին կը վերակառուցուին հրետակոծութենէն փուլ եկած եւ վնասուած տուները, որոնց թիւը կը հասնի երեք տասնեակի, կուպրապատուած են համայնքի բոլոր փողոցները:

Կառավարութեան ղեկավարը եղած է նաեւ Ներքին Կարմիրաղբիւր համայնք, ուր ծանօթացած է «Մայրիկ» անունը կրող պուրակախաղաղահրապարակի կառուցման եւ հրետակոծութենէն վնասուած ծբնակարաններու վերանորոգման աշխատանքներուն:

Նիկոլ Փաշինեան տիկնոջ հետ եղած է նաեւ Բերդի ամրոց, ուր կը կատարուին պեղումներ:

Մարտ 1-ի Ձոհերու Հարագատներն

Շարունակուած էջ 1-էն

Յիշեցնենք, որ 2008-ի Մարտ 1-2-ի իրադարձութիւններու հետեւանքով տասը մարդ զոհուած է: Հայաստանի մէջ 2018-ի թաւշեայ յեղափոխութենէն յետոյ յայտարարուեցաւ «Մարտ 1»-ի գործի վերաբացման մասին, սահմանադրական կարգը տապալելու մեղադրանք առաջադրուեցաւ երկրորդ նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանին, պաշտպանութեան նախկին

նախարար՝ Միքայէլ Յարութիւնեանին, Ձինուած ուժերու գլխավոր շտաբի նախկին պետ, ՀԱՊԿ (Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան) գլխավոր քարտուղար՝ Իւրի Սաչատուրովին, արդարադատութիւնը խոչընդոտելու մեղադրանք՝ Ազգային անվտանգութեան խորհուրդի նախկին քարտուղար՝ Արմէն Գէորգեանին: Դատական նիստերը կը նախագահէ դատաւոր՝ Աննա Տանիբեկեան:

Ալիեւ. «Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի Ռազմական Համագործակցութիւնը Կը Մտահոգէ Մեզ»

Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի միջեւ եռակողմ ռազմական համագործակցութիւնը կը մտահոգէ պաշտօնական Պաքու: Նախօրէին այս մասին յայտարարած է Իլհամ Ալիեւ Ատրպէյճանի մէջ Յունաստանի նորանշանակ դեսպան՝ Նիքոս Փիփերիքոսի հաւատարմագիրները ընդունելու ընթացքին, անդրադառնալով Պաքուի եւ Աթէնքի յարաբերութիւններու առնչութեամբ վերջին շրջանին կուտակուած խնդիրներուն:

«Երկրորդ խնդրաշարոյց հարցը, որուն մասին ես կը ցանկայի յիշատակել, Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի միջեւ ծաւալուած ռազմական համագործակցութիւնն է: Ինչպէս գիտէք, Հայաստանը այն երկիրն է, որ գրաւած է մեր տարածքները: Հայաստանը չի կատարեր ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի բանաձեւերը եւ թշնամական պահուածք կը ցուցաբերէ: Մէկ խօսքով՝ Հայաստանը Ատրպէյճանի թշնամին է: Նման պայմաններուն, որեւէ



Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ

պետութեան սերտ ռազմական համագործակցութիւնը Հայաստանի հետ մեզ կը մտահոգէ, քանի որ այդ պայմանական սպառնալիք կը հանդիսանայ Ատրպէյճանի համար», - յայտարարած է Իլհամ Ալիեւ:

Դաւիթ Տօնոյեան Մոսկուայի Մէջ Մասնակցած Է ԱՊՅ, ՀԱՊԿ, ՇՀԿ Պաշտպանութեան Նախարարներու Համատեղ Նիստին



Մոսկուայի մէջ կայացած՝ պաշտպանութեան նախարարներու ժողովը

ՀՀ պաշտպանութեան նախարար՝ Դաւիթ Տօնոյեան Մոսկուայի մէջ մասնակցած է Անկախ Պետութիւններու համագործակցութեան (ԱՊՀ), Շանհայեան համագործակցութեան կազմակերպութեան / ՇՀԿ / եւ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) անդամ պետութիւններու պաշտպանական գերատեսչութիւններու ղեկավարներու համատեղ նիստին:

Նիստի բացման խօսքին մէջ Ռուսաստանի Դաշնութեան պաշտպանութեան նախարար՝ Սերկէյ Շոյգուն նշած է, որ նման ձեւաչափով հանդիպում մը առաջին անգամն է տեղի կ'ունենայ, եւ վստահութիւն յայտնած, որ միջազգային ռազմական համագործակցութիւնը այս հանդիպումէն յետոյ առաւել կ'աշխուժանայ, իսկ նիստի արդիւնքները կը նպաստեն գերատեսչութիւններու փոխգործակցութեան խորացման:

ՌԴ Պաշտպանութեան Նախարարութեան մասնագէտները պաշտպանական գերատեսչութիւններու ղեկավարներուն ներկայացուցած են «Քորոնա» ժահրի վա-

րակին դէմ աշխարհի մէջ առաջինը գրանցուած ռուսական պատուաստի մշակման եւ փորձարկման մանրամասնութիւնները:

Նիստի մասնակիցները այցելած են նաեւ մերձսկոպիեան ՌԴ Ձինուած ուժերու Գլխավոր տնօրէն եւ «Յիշողութեան ճանապարհ» թանգարանային համալիրը: Դաւիթ Տօնոյեան «Յիշողութեան ճանապարհ» համալիրի փոխազդեցութեամբ որոնման համակարգի միջոցով գտած է Հայրենական մեծ պատերազմի մասնակից պապի՝ Յովհաննէս Պողոսի Յակոբովի մասին փաստեր:


«Յիշողութեան ճանապարհ» թանգարանային համալիրը ստեղծուած է Հայրենական մեծ պատերազմի մասնակից խորհրդային զինուորներու յիշատակը յաւերժացնելու նպատակով: Այժմ ան կը ներառէ 33 միլիոն գրառում եւ լուսանկար:

Նիստի ծիրէն ներս, ստորագրուած են ԱՊՀ եւ ՀԱՊԿ շրջագիծէն ներս շարք մը փաստաթուղթեր: Այդ մասին կը յայտնէ Պաշտպանութեան Նախարարութեան մամլոյ քարտուղար՝ Շուշան Ստեփանեան:

Շաբթուայ Օրագիրը

Պայտրոնի 365 Միլիոն Տոլարը Եւ Ծառուկեանի Խոստացած Սովը

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ



Դեմոկրատ կուսակցութեան նախագահական թեկնածու ձՕ ՊԱՅ-ՏԼՆԻ ընտրարշաւը Օգոստոս ամսուայ ընթացքին հանգանակած է 365 միլիոն տոլար, որ կը նկատուի մրցանիչ՝ Ամերիկայի նախագահական ընտրութիւններու պատմութեան մէջ: Այս գումարը յատկանշական է, երբ նկատի ունենանք որ, Մարտ ամսուն, երբ Պայտրոն ապահովեց Դեմոկրատներու թեկնածութիւնը, անոր ընտրարշաւը ամբողջութեամբ անանկ էր:

Նախագահ ԹՐԱՄՓԻ ընտրարշաւը տակաւին չէ յայտարարած Օգոստոսի հանգանակութեան գումարը, որ օրէնքով պարտաւոր են ընել բոլոր թեկնածուները:



Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան ղեկավար ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ յայտարարեց, որ կը պատրաստուի հսկայ ցոյց կազմա-

կերպելու: Կ'ըսուի որ Ծառուկեան այս հանրահաւաքը պիտի կազմակերպէ իր ուժերով, առանց հրաւիրելու ՀՅԴ-ին եւ ԱԱԾ-ի նախկին տնօրէն ԱՐԹԻՐ ՎԱՆԵՑԵԱՆԻ հիմնած «Հայրենիք» կուսակցութեան, որոնց հետ առենէ մը ի վեր համագործակցութիւն ստեղծած էր: Անցեալ Յունիսին Ծառուկեան յայտարարած էր որ, երեք ամիս ետք Հայաստանի մէջ սով պիտի պատահի, սակայն իր այդ յոյսերը չիրականացան եւ այժմ հանրահաւաքը տեղի պիտի ունենայ պատմութեան դասագիրքերու



փոփոխութեան դէմ:

Թուրքիոյ նախագահ ՌԵՃԵՊ ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆ կը շարունակէ Յունաստանի հետ լարուածութիւն ստեղծել Միջերկրական ծովին մէջ: Ֆրանսայի նախագահ ԷՄԱՆՈՒԷԼ ՄԱԿՐՈՆԻ առաջնորդութեամբ Եւրոպական երկիրները համախմբուած են պատասխանելու համար թրքական սպառնալիքներուն: Եւրոպական Խորհուրդի ղեկավարները կը յայտարարեն որ, Թուրքիա կ'ուզէ վերականգնել իր նախկին կայսրութիւնը, սակայն իրենք վճռած են ուժի միջոցաւ կասեցնել այդ ծրագիրները, նախ օգտագործելով Թուրքիոյ դէմ տնտեսական պատժամիջոցները:

Հայաստանի Սահմանադրական Դատարանի անգամութեան թեկնածու ԵՐՈՒԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐԵԱՆԻ անուան շուրջ պատգամաւորներու մօտ կան վերապահու-

թիւններ: Ազգային ժողովը կը պատրաստուի քննարկելու ՄԴ-ի երեք թափուր տեղերուն համար



դատաւորներու ժողովին կողմէ առաջադրուած Խունդկարեանի թեկնածութիւնը, սակայն մամուլի մէջ լուր կը տեսնեն անոր անցեալի գործունէութեան մասին մտահոգիչ տեղեկութիւններ:

Բարձր պաշտօնին ձգտող դատաւոր Խունդկարեանը Թեղուտի հանքավայրի հարցով, «Ա1+» հեռատեսիլի փակման եւ մի քանի սփիւռքահայ գործարարներու նկատմամբ կայացուցած է նախկին իշխանութիւններու պատուէրով վճիռներ:

Ընդդիմադիր 5-րդ ալիքի սեփականատէր ներկայացող ԱՐՄԷՆ ԹԱԻԱԴԵԱՆ ահազանգ կը հնչեցնէ, որ իշխանութիւնները կը պատրաստուին փակելու իր ղեկավարած հեռատեսիլի կայանը, երբ 2021-ի Յունուարին տեղի ունենան հեռատեսիլի ալիքներու արտօնագիրները վերանորոգելու մրցութիւնները: Կ'արժէ յիշել որ, 5-րդ ալիքի իսկական տէրը ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆ է, որու օրով փակուեցան «Ա1+» եւ «Նոյան Տապան» անկախ հեռատեսիլի ալիքները: Թաւաղեանի նմաններուն կ'սուի՝ «գող, սիրտը դող»:

Սէնտսի լրագրող ձԱՄԱԼ ԽԱՇՔԱԺԻԻ սպանութեան հարցով, Սէնտսական Արաբիոյ դատարանը արձակեց իր վերջնական որոշումը: Ութը ամբաստանեալներէն հինգը դատապարտուեցան 20 տարուայ բանտարկութեան, երկուքը՝ 10 տարուայ, իսկ մէկ ամբաստանեալ 2 տարուայ բանտարկութեան: Սէնտսի ընդդիմադիր լրագրող Խաշաքճիի սպանուած էր



Պոլսոյ մէջ Սէնտսական Արաբիոյ հիւպատոսարանէն ներս: Սակայն, սպանութեան պատուիրատուները մնացին չբացալստուած:

Նախագահ ՏԱՆՈՒՏ ԹՐԱՄՓ կը շարունակէ դժգոհիլ յառաջիկայ ընտրութիւններուն ընթացքին փոստով քուէարկելու կարելիութիւնը ընդլայնելու առթիւ: Համաճարակի պատճառաւ Ամերիկայի շատ մը նահանգներ սկսած են քաջալերել իրենց քաղաքացիները, որպէսզի դիմեն փոստով քուէարկելու եղանակին ու այս նպատակով քուէաթերթիկներ կ'ուղարկուին ընտրողներու բնակարանները:



Թրամփի կարծիքով, փոստով քուէարկութիւնը առիթ կու տայ գեղծարարութեան, հակառակ որ տուեալներ չկան, որ այդ պնդումները կը համապատասխանեն իրականութեան:

Թրամփի Ամերիկայի առաջին նախագահ է որ բացէ ի բաց կը յայտարարէ որ, եթէ ինք չյաղթէ, ուրեմն ընտրութիւնները կեղծուած են: Այսպիսով, Թրամփի օրով կը շարունակուի Ամերիկայի վարկաբեկումը՝ յաչս աշխարհին:

Ռուսական Մամուլը Կը Պնդէ

Շարունակուած էջ 1-էն

քերը. - «Աշխոյժ խօսակցութիւններ կը շրջանառուին, որ Թուրքիան փաստացի ռազմակայան ստեղծած է Ատրպէյճանի մէջ, եւ վերջին գորավարժութիւններէն յետոյ, Անգարան Ատրպէյճանի մէջ ձգած է իր գորքի մէկ մասը, ինչպէս նաեւ F-16 օդանաւերն ու անոնց անձնակազմերը»:

Թուրք քաղաքագետ Էնկին Օզերը, որ աշխուժօրէն կը վկայակոչուի ատրպէյճանական լրատուամիջոցներու կողմէ, կը հաստատէ որ. - «Թրքական զինուորականները մինչ այդ ալ ներկայութիւն ունէին Նախիջեւանի մէջ, ինչո՞ւ անոնց չտալ պաշտօնական կարգավիճակ, չէ՞ որ անոր համար իրականացան խոչընդոտներ չկան»:

Ընդամէնը քանի մը տարի առաջ, ինչպէս կը նշէ «Տէյլի Սապահ» թրքական պարբերականը, Թուրքիան իր սահմաններէն դուրս ռազմակայան չունէր՝ բա-

ցառութեամբ փոքր ռազմական ներկայութեան, Կիպրոսի մէկ հատուածի մէջ: Այսօր, սակայն, Թուրքիան արդէն ռազմակայաններ ունի Սոմալի, Քաթարի, Իրաքի եւ Սուրիոյ մէջ:

Ատրպէյճանի մէջ Թուրքիան ռազմական ներկայութիւն չունի, կը հակադարձէ պաշտօնական Պաքուն, կտրականապէս հերքելով նաեւ երկրին մէջ սուրիացի զինեալներու ներկայութեան մասին «Նեզավիսիմանա Գազեթա»-ի պնդումները:

Սեպտեմբեր 2-ին, յատուկ յայտարարութեամբ հանդէս եկած է Ատրպէյճանի ռազմական գերատեսչութիւնը: «Պաշտօնապէս կը յայտարարենք, որ երկրի տարածքին վրայ չկան օտար երկրացի պետութիւններու ռազմակայաններ կամ այլ ապօրինի զինուած խմբաւորումներ», - ըսուած է Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան տարածած յայտարարութեան մէջ:

Արայիկ Յարութիւնեան

Շարունակուած էջ 1-էն

րաւոր է բերի դարաբաղեան խնդրի ինչ-որ ժամանակաւոր, ոչ թէ ժամանակաւոր, գոնէ մասնակի լուծման: Ամբողջական լուծում հնարաւոր չէ, Քոսովոն էլ ամբողջապէս լուծուած չէ, բայց գոնէ ինչ-որ առումով լուծուած է այդ ամէնը», - աւելցուց նախագահը:

Միւս կողմէ Արցախի Արտաքին Գործոց Նախարար Մասիս Մայիլեան յայտարարեց որ, «Մատրիտեան սկզբունքները» այլեւս չեն քննարկուիր:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին Մայիլեան ըսած է. «Մատրիտեան առաջարկները», ինչպէս գիտէք,

առաջարկուել էին Ատրպէյճանի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարներին 2007 թուականի Նոյեմբերին, բայց այդ մատրիտեան տրամաբանութիւնն ինքը, արմատները դրա աւելի խորն են, դա հասնում է մինչեւ 91 թուականի դեկտեմբերի 16-ը, եւ Եւրոպայի 12 պետութիւնների արտաքին գործոց նախարարներ մի փաստաթուղթ ընդունեցին, այն չափանիշներն ընդունեցին, որի համաձայն իրենք կարող են ճանաչել որպէս անկախ այն պետութիւնները նախկին Խորհրդային Միութիւնում եւ Արեւելեան Եւրոպայում, որոնք համապատասխանում են այսինքն՝ այդ չափանիշներին»:

Ձեր Ծանուցումները Կատարեցէք
«Մասիս» Շաբաթերօրին
Massis2@earthlink.net 626-797-7680

Պատարագ Մատուցուեցաւ Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցւոյ Մէջ



Պոլսոյ «Մարմարա» թերթէն կ'իմանանք թէ Կիրակի, 6 Սեպտեմբեր, 2020ին, տեղի ունեցած է աւանդութիւն դարձած Աղթամարի տարեկան ուխտագնացութիւնը: Այս առթիւ 25 հոգիներու շքախումբ մը ժամանած է Պոլիսէն վան, գլխաւորութեամբ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Սահակ Բ. Արք. Մաշալեանի:

Օր մը առաջ, Շաբաթ առաւօտուն, Նորին ամենապատուութիւն պատրիարք հայրը, քաղաքավարական այցելութիւն մը տուած է վանի կուսակալ Մէհմէտ Էմին Պիլմէզին: Կուսակալը բարի գալուստ մաղթելէ ետք շնորհաւորած է պատրիարքը իր ընտրութեան առթիւ եւ շեշտած է որ պատարագները պէտք է շարունակուին, պատրիարքը շնորհակալութիւն յայտնած է ընդունելութեան եւ տրուած դիւրութիւններուն համար: Այս առթիւ կատարուած է նաեւ յուշանուէրներու փոխանակում:

Կիրակի օրուան պատարագին պատրիարք հայրը հրաշափառ երգեցողութեամբ մուտք գործած է Աղթամար կղզիի Ս. Խաչ Մաշր տաճարէն ներս: Օրուան պատարագին էր Տ. Գրիգոր Ա. Քհնյ. Տաճատեան: Ս. Պատարագին ներկայ էին վանի կուսակալ Մէհմէտ Էմին Պիլմէզ, վազըֆներու ընդհանուր տնօրէնը ու այլ պաշտօնեաներ:

Պատրիարք հայրը նախ հայերէն եւ ապա թրքերէն լեզուով քարոզած է «Զօրութիւն սուրբ Խաչի քո Քրիստոս» բնաբանով: Պատարագի աւարտին տեղի ունեցած է հոգեհանգիստ ի յիշատակ վախճանեալ կաթողիկոսներու եւ հոգեւորականներու:

Համաճարակի պատճառով այս տարի ուխտաւորներ եւ ժողովուրդներկայ չեն գտնուած պատարագին: Սակայն ամբողջ արարողութիւնը համացանցի միջոցով սփռուած է ուղղակի հաղորդումով:

Յաւերժութեան Կոթող Կոմիտասի Կիսանդրիին Բացումը Մոնրեալի Մէջ

«Արմէնփրէս»-էն կ'իմանանք թէ Գանատայի Մոնրեալ քաղաքին մէջ, Կիրակի Սեպտեմբեր 6ին, տեղի ունեցած է անմահ Կոմիտաս վարդապետի կիսանդրիին բացումը: Ինչպէս ծանօթ է՝ աշխարհի բազմաթիւ երկիրներու մէջ, հայկական համայնքներու նախաձեռնութեամբ կը հաստատուին Կոմի-

տասի արձանները: Իսկ այս վերջինն ալ եկած է համալրել այդ շարքը: Կիսանդրիի բացման արարողութեան ներկայ գտնուած է ընտրանի հասարակութիւն մը: Կոմիտասի կիսանդրիի հեղինակն է Մկրտիչ Տարագճեան:

Քոչարեանի Դատավարութեան Զաւեշտիւն

Շարունակուած էջ 1-էն
Մի ժողովուրդէն գոցուած գունարներով: Անոնց համար դատավարութիւնը որքան երկարի՜ այնքան աւելի շահաբեր է: Իսկ, Քոչարեանի նպատակը շատ պարզ է՝ առիթ չտալ որ դատավարութիւնը տեղէն շարժի, յուսալով որ երկրէն ներս տեղի կ'ունենան քաղաքական եւ կամ այլ զարգացումներու, որոնք կրնան աւելի բարենպաստ պայմաններ ստեղծել՝ պատասխանատուութենէն խուսափելու համար: Միջազգային օրէն սահմանուած իրաւունքներէն մէկը, արդար դատավարութեան կողքին, արագ դատավարութեան սկզբունքն է, որ պէտք է ապահովուի եւ ամբաստանեալին եւ տուժող կողմին համար: Սակայն, Հայաստանի մէջ դատավարութիւնները կը տեւեն ամիսներ եւ երբեմն տարիներ: Այժմ որ Քոչարեան ազատութեան մէջ է, անոր փաստաբանները պիտի շարունակեն շարժիլ նոյն եղանակով եւ հանրութեան մօտ արդէն իսկ կայ մտավախութիւն, որ այս դատավարութիւնը երբեք իր աւարտին պիտի չհասնի ու Մարտի 1-ի գոհերու իրաւայաջորդները պիտի զրկուին իրենց արդար իրաւունքներէն:

Չոհեբու հարազատներու վերջին քայլը ահագնազ է նախ եւ առաջ Հայաստանի իշխանութիւններուն եւ մասնաւորաբար Արդարադատութեան նախարարին, որոնք ի վիճակի են վերջ տալու շարունակուող խեղկատակութեան: Անյապաղ դիմելով օրէնսդրական քայլերու, կարելիութիւն պէտք է տրուի բոլոր դատաւորներուն իրենց պարտականութիւնները կատարելու աւելի արդիւնաւէտ կերպով, առաջին հերթին կողմերուն պարտադրելով տրամաբանական ժամկետներու մէջ դատավարութիւնները հասցնելու իրենց աւարտին: «ՍԱՍԻՍ»

Կարօ Փայլանի Հարցազիրը Թուրքիոյ Խորհրդարանին 1955-ի Պատահարներու 65 Ամեակին Առթիւ



Երեսփոխան Կարօ Փայլան, որ յաճախակի կերպով օրակարգի կը բերէ փոքրամասնութիւններու խնդիրները, այս անգամ 1955ի տխուր պատահարներու 65-ամեակին առթիւ, Թուրքիոյ Խորհրդարանի նախագահութեան փոխանցեց հարցազիր մը եւ պահանջեց որ քննութիւն բացուի եւ այդ խնդրին բուն պատասխանատուները երեւան հանուին: Նշեց նաեւ որ 1955ի Սեմտեմբեր 6-7 պատահարներու պաշտօնական տրեւումներու համաձայն՝ Իսթանպուլի մէջ 72 եկեղեցիներ, 8 աղօթատեղիներ, 2 վանքեր, 3,584 յոյներուն պատկանող աւելի քան 5 հազար բնակարաններ ու գործա-

տեղիներ քանդուեցան, հրկիզուեցան եւ թալանի ենթարկուեցան: Այդ գիշեր 60 կիներ բռնաբարուեցան, բազմաթիւ անձեր սպանուեցան, յոյն հոգեւորականներ ձեռքի ու չարձակումի ենթարկուեցան, հայ յոյն կամ սուրիանի անհամար մարդիկ ստիպուեցան հեռանալ երկրէն: Կարօ Փայլան պահանջեց որ կազմակերպիչները երեւան հանուին, տուժած անձերու ու հաստատութիւններու վնասներն ալ հատուցուին, ու չալ ըլլայ արդարութիւնը թող չաղթանակէ: Ասիկա Խորհրդարանին համար նոր քայլ մը պիտի ըլլայ անցեալի հետ հաշտուելու գործին մէջ:

Ազգային Ժողովի Նախագահն ու Վեհափառը քննարկած են միջազգային համաձայնագրերուն եւ կրթական չափորոշիչներուն վերաբերող հարցեր



Ազգային Ժողովի նախագահ՝ Արարատ Միրզոյեան Սեպտեմբեր 8-ին ընդունած է Ամենայն Հայոց կաթողիկոս՝ Գարեգին երկրորդը: Շնորհակալութիւն յայտնելով հանդիպման հրաւերը ընդունելու համար, Ազգային Ժողովի նախագահը նշած է, որ եկեղեցի-պետութիւն եւ եկեղեցի-կրթական համակարգ յարաբերութիւններուն վերաբերող շարք մը հասարակական հնչեղութիւն ունեցող հարցեր այժմ կը քննարկուին, եւ աւելցուցած, որ Հայ Առաքելական սուրբ եկեղեցին դարերու ընթացքին եղած է հայ ազգի յենասիւններէն մէկը ու 21-րդ դարուն ալ կը շարունակէ սերտ համագործակցութիւնը պետութեան հետ, յանուն հայ ժողովուրդի բարօրութեան, բուռն է Աժ հասարակութեան հետ կապերու եւ հարգակցութեան վարչութեան հարգազրուութեան մէջ:

Վեհափառը նշած է, որ բազում հարցեր ծառայած են ժողովուրդի եւ պետութեան առջեւ, եւ այդ մարտահրաւէրները դիմակայելու հարցով մեծապէս կարեւոր է Ազգային Ժողովի օրէնսդրական առաքելութիւնը: Ան աւելցուցած է, որ Հայ Առաքելական եկեղեցին անկախութենէն ի վեր սերտօրէն գործակցած է Ազգային Ժողովին հետ, եւ այդ գործակցութիւնը նաեւ իր դրական արդիւնքը ունեցած է եկեղեցի-պետութիւն յարաբերութիւնները կարգաւորող օրէնսդրութեան մշակման գործով: Աժ-ի նախագահն ու վեհափառը անդրադարձած են միջազգային համաձայնագրերու եւ կրթական չափորոշիչներու վերաբերող հարցերուն:

Արցախի Հանրապետութիւնը Իրողութիւն Է



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹ

Արցախի Հանրապետութեան
29-րդ տարեդարձն է այսօր:

1991-ին, Խորհրդային Միութեան տարբազարձման հոլովոյթին, երբ միութեան անդամները հերթաբար կ'անջատուէին կեդրոնական իշխանութենէն եւ կը սկսէին հարթել իրենց ինքնուրոյն եւ ինքնիշխան ուղիները, Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի եւ Շահումեանի շրջանի ղեկավարութիւնները, միացեալ նիստով մը, ի լուր աշխարհին, կը յայտարարէին իրենց հանրապետութեան ծննդեան մասին:

Այս բախտորոշ քայլը հետեւեցաւ երեք օր առաջ Ատրպէյճանի Գերագոյն Խորհուրդի ընդունած որոշում-հռչակագիրին, զորս Ատրպէյճանը կը յայտարարէր իբրեւ անկախ հանրապետութիւն: Այս յայտարարութեան մէջ, Ատրպէյճան իր տարածքները կը համարէր 1918-1920 թուականներու սահմանները: Հետեւաբար, այդ թուականներուն, երբ Ղարաբաղ կը գտնուէր հայկական ուժերու հակակշիռին տակ կամ կը նկատուէր «վիճելի տարածք», ինքնըստինքեան նորահռչակ հանրապետութենէն դուրս կը մնար որպէս ինքնավար շրջան: Այս փաստին լոյսին տակ, նոր իրավիճակ մը կը ստեղծուէր արցախահայութեան համար, որ 1988-էն սկսած էր իր պայքարը յանուն Խ. Հայաստանին միացման եւ իր անբռնաբարելի ինքնութեան:

Ստեփանակերտէն սփռուած անկախութեան հռչակագիրը յոյժ կարեւոր փաստաթուղթ մըն է, որուն մէջ կէտ առ կէտ կը բացատրուին այն բոլոր հանգամանքները, որոնցմէ ծնունդ կ'առնէ պետական նոր միւտը. հոն ի միջի այլոց կը կարդանք.

-արտայայտելով ժողովրդի 1988-1991 թթ. ԼՂԻՄ-ի եւ Շահումեանի շրջանի իշխանութեան մարմինների օրէնսդրական արժեքով ամրակայուած կամքը, ազատութեան, անկախութեան, իրաւահաւասարութեան եւ բարի դրացիութեան իր ձգտումը,

-հաշուի առնելով, որ Ատրպէյճանի մէջ անցկացուող խտրականութեան քաղաքականութիւնը աստիճանաբար եւ անհանդուրժողութեան մթնոլորտ է ստեղծել հանրապետութեան հայերի նկատմամբ, ինչն էլ ընդհարման է հասցրել մարդկային մեծաթիւ զոհերով. հայկական խաղաղ գիւղերի տեղահանութեամբ,

-գտնելով, որ հայ ժողովրդի միաւորելու ձգտումը բնական է եւ համապատասխանում է միջազգային իրաւունքի նորմերին,

-նկատի առնելով երկրում տիրող իրադրութեան բարդութիւնն ու

հակասականութիւնը, ապագայ միութեան իշխանութեան եւ կառավարման միութեանական կառուցուածքների ճակատագրի անորոշութիւնը,

-յարգելով ու հետեւելով մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագրի, տնտեսական, ընկերային եւ մշակութային իրաւունքների մասին միջազգային դաշնագրի, քաղաքացիական ու մշակութային իրաւունքների մասին միջազգային դաշնագրի սկզբունքներին,

-յոյս դնելով միջազգային ընկե-

րակցութեան ըմբռնումի ու պաշտպանութեան վրայ,

Հռչակում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը՝ կրճատ՝ ԼՂՀ:

Բնականաբար, Պաքուի հակազդեցութիւնը ոչ միայն ցասումնալից էր, այլեւ՝ ռազմամոլութեամբ թունաւոր: 1988-էն ծայր առած հայ-ազերիական հակամարտութիւնը վերածուեցաւ արիւնալի եւ լայնածաւալ պատերազմի: Ատրպէյճանի վերնախաւը անդրդուելիօրէն կը մերժէր ճանչնալ արցախահայութեան իրաւունքը, կը ցանկար իր սաղմին մէջ խեղդել նորածիլ հանրապետութիւնը, ի սպառ ջնջել հայկական ներկայութեան փաստը Արցախի տարածքէն:

Սակայն, Արցախի հայութիւնը կ'ընթանար իր նպատակասլաց ճանապարհով՝ հաստատօրէն եւ անայլա՛յլօրէն:


Հակադիր կողմերուն կատաղութիւնը հասաւ հոն, ուր հազարաւոր զոհերէ ետք, ազերիական բանակին անփառունակ պարտութենէն յետոյ եւ փրկելու համար իր խալտուակ գահավիժումը, Պաքու 1994 Մայիս 12-ին թախանձեց զինադադար մը, որ ի գօրու է ցայսօր: 1988-էն սկսած շարժումը՝

Ղարաբաղի Հայաստանին միացման, 1991-ին Արցախի անկախութեան հռչակագիրը եւ 1994-ի հրադադարը եղան այն էական հանգրուանները, որոնց լոյսին տակ կրնանք հաստատել, թէ Արցախի Հանրապետութիւնը փաստ է եւ իրականութիւն:

Աւելի ուշ, ողջունելի քայլով մը, արցախահայեր իրենց հանրապետութեան պաշտօնական անունը մկրտեցին «Արցախի Հանրապետութիւն» անունով: Հանրապետութիւն՝ որ կ'ամբողջացնէ ինքնուրոյն պետութեան մը բոլոր ստորոգելիները՝ դրօշ, հիմներգ, նախագահ, ժողովրդավարական ընտրութիւններ, կառավարութիւն, խորհրդարան, բանակ, տնտեսութիւն, կրթական եւ մշակութային կեանք, անառիկ սահմաններ, արտաքին կապեր եւ շատ մը պաշտօնական թէ անպաշտօնական միաւորներու կողմէ ճանչցուած եւ ընդունուած իրականութիւն եւ փաստ: Անուրանալի եւ անժխտելի իրողութիւն:

Արցախահայութիւնը իսկութեան մէջ Հայաստանին մէկ մասնիկն է: Հասկնալիօրէն ներկայ պայմաններուն լոյսին տակ, ինք-




Շար.ը էջ 16




THE TIME TO GIVE BLOOD IS NOW

STEP UP! GIVE LIFE...
CELEBRATE ARMENIA'S INDEPENDENCE
SAVE A LIFE. GIVE BLOOD!

Sponsored by
Armenian Educational Benovolent Union
Armenian Council of America
Gaidz Youth Organization

Conducted by
 **American Red Cross**

AEBU Center
1060 N Allen Ave, Pasadena, CA 91104

SUNDAY, SEPTEMBER 20, 2020

12:00 PM – 6:00 PM

Schedule your Appointment
Visit www.redcrossblood.org and enter sponsor code **AEBU**

For more information:
ACA @ 818.660.5142

Յեղափոխութեան Քննարկումը եւ Լիբանանեան Տագնապը - Դ

Ծ.Խ. Օգոստոս 4-ին Պէյրութի տհաւոր պայթումը եւ Լիբանանի ապագային մասին հարցադրումներու հեղեղը, առիթը հանդիսացան մեր արխիւի մէջէն դուրս հանելու 44 տարիներ առաջ մեր գրած մէկ յօդուածաշարքը, խորագրուած՝ «Յեղափոխութեան քննարկումը եւ Լիբանանեան Տագնապը», որ յաջորդական 6 թիւերով լոյս տեսած էր Պէյրութի «Արարատ» օրաթերթին մէջ, 1976-ի Փետրուար-Մարտ ամիսներուն: Յօդուածաշարքի վերջին թիւով մենք կը ներկայացնէինք մեր խորհրդածութիւնները, որ ի՞նչ հիմքերու վրայ կարելի պիտի ըլլայ կառուցել ապագայ Լիբանանը: «Մասիս»ի այս եւ յաջորդական թիւերով պիտի վերատպենք այդ յօդուածաշարքը, որմէ ետք պիտի տանք մեր ներկայի խորհրդածութիւնները:

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Նախկին բլանաւորման նախարար Մորիս ձեմալէլ 1970 թուին կը գրէր. «Լիբանանի յետադէմ շրջանակները աւելի ճիշտ պիտի ըլլար եթէ ըսէր յետամնաց դեկափարուութիւնը բարեխղճօրէն կը շփոթեն հետեւեալ երկու սահմանները. կեցեալութիւնը (որ քարացած «սթաթիւ քօն» է) ու կայունութիւնը որ կը մարմնաւորէ ներդաշնակ ու հաւասարակշռուած աճի ու ժամանակակիցութիւնը: Կայունութիւնը շարժումի հաւասարակշռութիւնն է, յեղափոխական ու յեղաշրջեալ ըմբռնում մըն է: Կեցեալութիւնը անհաւասարակշռութիւն մըն է անիշխանականութեան մէջ՝ անշարժ ու անբեղմնաւոր: Լիբանանի մէջ կայունութեան անուան տակ կեցեալութիւնն է որ կը քողարկուի: Առաջինը պաշտպանելով, երկրորդը կ'ամրացնեն: Լիբանանցիներուն պարտականութիւնն է միանգամըմիշտ մերժել այս շեղումը, գիտակցելով արդի պետութեան մը պարտականութեան»: Լիբանանեան դեկափարուութեան ուղին մինչեւ հիմա եղած է առօրեայ խնդիրներու լուծումը, մինչ ներդաշնակ ու պահանջէ բլանաւորում, ու ապագայի հարցերու կանխագուշակում:

Հիմա որ մակերեսային ակնարկ մը նետած եղանք Լիբանանի վերջին հարիւր տարուայ պատմութեան վրայ, ու նշած խնդրին բուն էութիւնը, քիչ մը խորանանք այս տագնապին քննարկութեան մէջ: Անկեղծօրէն պէտք է ըսենք, թէ Պաղեստինեան Դիմադրութեան ներկայութիւնը Լիբանանի մէջ, արագացուցիչի դերը խաղցաւ այս տագնապին հասունացման մէջ: Պաղեստինեան ներկայութիւնը, մանաւանդ զինեալ ներկայութիւնը Գահիրէի համաձայնութենէն (Դեկտեմբեր 1969) ետք, ուժերու խախտում մը յառաջ բերաւ, նկատելով իր իսլամ զանգուածը ինքզինք Պաղեստինեան Դիմադրութեան աւելի մօտ գրգռելու սերտ յարաբերութիւններ մշակեց անոր հետ քան թէ Քրիստոնեայ զանգուածը: Արդարեւ, այս իսլամ զանգուածը, որ մինչ այդ չէր կրցած ուժեղ կերպով իր պահանջները ներկայացնել, ժամանակը յարմար նկատեց անոնց վերանայումին: Այս մէկը բացորոշ էր ու լիբանանեան աջը արդէն իսկ նկատած էր այդ: Սակայն փոխանակ փորձելու միջին ճամբայ մը գտնելու ու վերանորոգելու երկրին հինցած կարգն ու սարգը (բան մը որ անխուսափելի է ու դարուս պահանջն է), բռնեց շատ սխալ ճամբայ մը:

Արդարեւ շեհապական թեկնածու էլիտա Սարգիսի վրայ, Սլէյման Ֆրանժիէի տարած յաղթանակով, աջը կը վրէժը լուծեց Բ. Գրասնեակէն, որ մինչ այդ մեծ դեր խաղցած էր պաղեստինցիներու Լիբանան ընդունման մէջ: Այսպիսով, աջը, Բ. Գրասնեակէն

ձեռքէն խլեց նախաձեռնութիւնը Պաղեստինեան ներկայութեան հետ վարուելու իր հասկցած ձեռով: Հոս է որ խելացի դեկափարութիւն մը, համաձայն իր բլանաւորման ու հեռանկարներուն, պիտի կարենար գտնել յարմարագոյն լուծումը: Եւ սակայն Ս. Ֆրանժիէի վարչակարգը ձախողեցաւ այս կէտին մէջ: Ան կրնար հետեւիլ Սուրիոյ օրինակին ու գորացնել պետութիւնն ու բանակը, (որպէսզի որեւէ օրինազանցութեան պարագային կարենայ տիրել կացութեան) եւ կամ տիալովի միջոցաւ յանգիլ լուծումի մը: Սակայն այսպէս չըրաւ, ու փոխարէնը պաղեստինեան զինեալ ներկայութեան դիմաց գորացուց տիրող աջակողմեան միջոցները, միաժամանակ հիմնելով նորեր: Այս քայլը խոտոր կը համեմատի (չըսելու համար անբնական) 20րդ դարու երկրի մը պահանջներուն: Այսպիսով գէնքը տարածուեցաւ ժողովուրդին ձեռքերուն մէջ եւ հետեւաբար անկանոնութիւններն ալ սկսան շատնալ: Այս կէտը մեզի կը յիշեցնէ նախաքրիստոնէական շրջանի Յունաստանը (Ն.Ք 6րդ դար) ուր Հելլենները միշտ իրենց գէնքերով կը պտըտէին, որովհետեւ իրենց տունները պաշտպանուած չէին, կեդրոնական ուժի մը չգոյութեան պատճառով: Այս դրութիւնը կամաց կամաց կը հատատուէր Լիբանանի մէջ, որպէս արդիւնք աջին այս անխոհեմ քայլին: Զօրացնել երկրի կարգ մը խաւերը, ի վնաս երկրին ընդհանուր շահերուն, կը նշանակէ երկիրը թուլացնել ամէն արտաքին ներխուժումի ու միջամտութեան առջեւ: Այս մէկը չուշացաւ ու այսօր այս քաղաքականութեան արդիւնքն է որ կը քաղեն:

ղութիւն: Եթէ եղան տարրեր, որոնք խաբուեցան իթթիհատէն, ուրիշներ գործակցեցան սերտօրէն, շատեր լեզու գտնել փորձեցին, ոմանք անոնց քաղաքակիրթ պատկերացուցին, Պուլսոյ եւ Սիւսի հոգեւոր պետերը հնազանդութեան յորդորներ կարգացին եւ զինաթափութեան կոչ ըրին, Անդրանիկ փառացի իւրացուցած ըլլալով հուլիսը քիւրտին եւ թուրքին, վճռեց՝ հարուածի դէմ կրկնակի հարուած, եաթաղանի դէմ՝ թուր. այսինքն՝ խօսիլ այն ոճով, որ ոճն էր սուլթանին, պէյին, էսքէրին, չէթէին եւ պաշլպօզուքին:

Եւ... իրաւացի էր Փաշան: Որովհետեւ, այն ինչ որ մնաց հայութեան, ինչ որ ունինք, եղաւ շնորհիւ հակահարուածի մարտավարութեան: Եւ այդ եղաւ Զորավարին ամենակարեւոր կտակը գալիք սերունդներուն:

Զորավարը յաւիտենապէս ննջեց իր պաշտելի հայրենիքէն շատ-շատ հեռու՝ ԱՄՆ-ի մէջ: Սակայն Արծիւը սաւառնեցաւ եւ վերջապէս անոր աճիւնները հանգչեցան Եռաբլուր՝ ապացուցելու որ ներկայ է ան՝ գէթ բարոյապէս ու ողբկան ուժով: Ինչ խօսք, հերոսները չեն կրնար ննջել յաւիտենա-

պէս եւ պէտք չէ ննջեն, քանզի նորա փթիթ հայորդիք կարիքը ունին հերոսներու: Առանց հերոսներու ազգ մը կրնա՞յ գոյատեւել, ստանալ բարոյական սնունդ եւ աւել:

Ինչ պատիւ ու սիրովանք անմահանուն Զորավարին, որ այսօր ներկայ է Հայաստանի բազմաթիւ վայրերու մէջ արձաններով, կոթողներով, կիսանդրիններով, յուշաքարերով, գիրքերով եւ... ոսկրտիքով: Իր յոգնաբեկ եւ բազմաչարչար աճիւնները կրնան միթիթաբուր, որ անդրանիկեան շունչով ու ոգիով կերտուած սերունդները տէրն ու պաշտպանն են Հայաստանի սահմաններուն՝ Արցախէն մինչեւ Տաւուշ ու Զանգեզուր: Ահա այստեղ է իսկական հերոսներուն առաքելութիւնը՝ ծառայել եւ ողբերկը նոյնիսկ յետմահու...:

97 տարի առաջ մեզմէ յաւերժօրէն բաժնուած Զորավարը ննջեց մարմնապէս, բայց կայ ու կը մնայ ամէնուր, քանզի հերոսները չեն կրնար ննջել: Մենք խոստացած ենք՝

Սուրբ անունդ պիտի յիշուի դարձ դար,

Հսկայ լեռնիք քեզ ապաստան, Անդրանիկ:

URGENT APPEAL

We stand in solidarity with our community in Beirut, Lebanon. The consequences of the tragic explosion on August 4 are horrific. Nothing can bring back precious lives lost. Nor is it easy to restore homes, churches, community centers and businesses damaged. But we can lend a helping hand to our brothers and sisters at the AEBU - Lebanon who are doing the impossible to help the wounded and the displaced following this disaster.

TOGETHER let's try to ease the pain and RESTORE HOPE!

CLICK HERE AND DONATE

Տ. Խաղ Արքեպիսկոպոս Աջապահեան Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի Նուիրեալը (1883-1968)

Խաղ Արքեպիսկոպոս իր Աջապահեան ազգատոհմի արժանաւոր ժառանգորդն ու վերջին շառաւիղը եղաւ: Տոհմանունը ինքնին կը բացայայտէ թէ սերունդներ շարունակ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ԱՅԸ պահպանողներն եղան Սիսի Կաթողիկոսարանին մէջ դարեր շարունակ, եւ ինք եղաւ չարաղէտ տարագրութեան ընթացքին իր ձեռքերով պահպանելու եւ փոխադրելու Սրբազան Արկղը մինչեւ Անթիլիաս:

ԴՊԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔԶՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Երախտիք

Աթոռին Տեղապահ Երջանկալի շատակ Տ. Խաղ Արքեպիսկոպոս Աջապահեանի յիշատակին կ'ընծայեմ սոյն գրութիւնը: Սրբազանը ծնած էր Սիս ու կը վախճանէր Լիբանանի մէջ 1968 թուի Յուլիսի 17-ին: Սրբազան Հայրը Կիլիկեան Աթոռի Սիսէն Անթիլիաս ճգնաժամի ճանապարհին մնաց ամենէն կարկառուն Աջապահեան աստուածընտիր սերունդի վերջին շառաւիղը, իր մեծաւորին՝ Տ.Տ. Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսի կողքին, տարագրութեան դժիւր տարիներուն, մինչեւ Աթոռին ապահով վերականգնումը Լիբանանի Անթիլիաս աւանին մէջ: Իր քաջակորով կեանքի երկրորդ մասը նուիրաբերեց յետ-եղեռնեան Տանն Կիլիկիոյ Աթոռին՝ վարելով Առաջնորդի կենսական պաշտօնները նորահաստատ թեմերէն ներս, երկիցս վարելով նաեւ Տեղապահի բարձր դիրքն ու պատասխանատու պաշտօնը՝ միշտ նախադասելով ամէն բանէ վեր Սիսի հնաւանդ Աթոռն ու անոր պատմական ինքնութիւնը:

Սիսի Սուրբ Աթոռին Ճշմարիտ Նուիրեալը

Խաղ Սրբազան Սիսի կաթողիկոսարանի Մայր Տաճարին մէջ 1909 թուին քահանայական կարգ ստացաւ իր մեծաւորէն, ու իր կեանքը նուիրեց Կիլիկիոյ Աթոռին՝ յատկապէս տարագրութենէն ետք երբ 1916-էն ետք Տանն Կիլիկիոյ Սահակ Բ Կաթողիկոս բռնի Երուսաղէմ կը մնար որպէս Կաթողիկոս-Պատրիարք տարիուկէս տեւողութեամբ:

Որպէս հաւատարիմ միաբան Տանն Կիլիկիոյ, գաղթականի գաւազանը ձեռքին, Խաղ Վարդապետ Աջապահեան, ընկերակցութեամբ՝ Պետրոս Սարաճեան եւ Եղիշէ Կարոյեան եպիսկոպոսներու, Միւռոնի սրբազան կաթսան, Լուսաւորչի Աջն ու արծաթեայ արկղը, Սիսի հնաւանդ եկեղեցական սպասներով միասին իր հետ առնելով անհատկ կը հասցնէր Հայկէպ եւ անկէ մի քանի տարիներ ետք Անթիլիաս որպէս իսկական Աջապահեան հոգեւորական:

Նոյն տարիներուն Խաղ Վարդապետ տեսուչ կը կարգուէր Պէյրութի երուսաղէմապատկան եկեղեցիին: Հինգ տարիներ ետք, երբ Սուրբիոյ եւ Լիբանանի Երուսաղէմի տեսչութիւնները Կիլիկիոյ Աթոռին փոխանցուեցան Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի միաբանութեան որոշումով, Աջապահեան Վարդապետ գլխաւոր միաբաններէն մին կը հանդիսանար եկեղեցական տեսչութիւնները թեմերու վերածելով եւ կարգաւ անոնց գլուխը անցնելով, միշտ Տ.Տ. Սահակ Կաթողիկոսի հրահանգով: Հերոսական նուիրումով ինք եւ միաբանակից հոգեւորականներ բռնի հեռացան Սիսէն եւ սակայն անվատ վերակերտեցին Սուրբ Աթոռը Լիբանանի մէջ:



Թեմական Պաշտօններ

Խաղ Աջապահեան վարդապետ 1929-ին Հայկէպի մէջ եպիսկոպոս կը ձեռնադրուէր Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ.Տ. Սահակ Հայրապետի ձեռամբ, օծակից ունենալով Արտաւազդ եպիսկոպոս Սիւրմէեանը: Խաղ Եպիսկոպոս իսկոյն կաթողիկոսական փոխանորդի պատասխանատու պաշտօնը կը վարէր Դամասկոսի (1929), եւ ապա Անտիոքի (1933) թեմերուն, կանոնական դերը ստանձնելով այն ատեն Երուսաղէմի տեսչութիւններու փոխանցման կարեւոր գործին մէջ: Իր հաւատարիմ եւ արդիւնաւոր ձամբուն վրայ Խաղ եպիսկոպոս Արքեպիսկոպոսութեան բարձրացաւ 1936-ին, երբ նոյն տարին վախճանեցաւ Աթոռակից ՏՏ Բաբգէն Ա Կաթողիկոս անժամանակ կերպով, եւ ապա իր կեանքն ու գործերը նուիրեց նորահաստատ Անթիլիասի Կաթողիկոսարանին՝ որպէս Կաթողիկոսական Փոխանորդ Լիբանանի թեմին, եւ ապա Տեղապահ երկիցս՝ 1941 եւ 1952 թուականներուն:

1941 թուին Խաղ Արքեպիսկոպոս դժուարին պայմաններու տակ, երբ արդէն Պետրոս Ա. Կաթողիկոս Սարաճեան վախճանած էր, որպէս Տեղապահ հրաւիրուեցաւ Մայր Աթոռ այցելելու եւ նախազահելու Ազգային-եկեղեցական Ժողովին որ պիտի ընտրէր Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Մայր Աթոռ թափուր էր 1938 թուականէն, նահատակ խորէն Ա. Մուրատբէգեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանումէն ի վեր, որ սակայն չիրագործուեցաւ եւ յետաձգուեցաւ եպիսկոպոսներու բացակայութեան պատճառով:

Աջապահեան Արքեպիսկոպոս իր Տեղապահի պաշտօնը յաջողութեամբ վարեց հինգ տարիներ եւ կարողացաւ յաջողցնել ընտրութիւնը Տ.Տ. Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսին՝ 1943 թուականին: Յաջորդող տասնամեակին Խաղ Արքեպիսկոպոս մնաց սերտ գործակիցը Գարեգին Ա. Կաթողիկոսին վարելով միանգամայն Լիբանանի Կաթողիկոսական Փոխանորդի պաշտօնը 1946-էն մինչեւ 1951, եւ ապա Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդութիւնը Գարեգին Ա. Հայրապետի հիւանդու-

թեան տարիներուն, մինչեւ Հայրապետին վախճանումը տարի մը ետք 1952 Յունիս 21-ին: Նոյն տարին Կիլիկեան Միաբանութիւնը Խաղ Սրբազանը ընտրեց Տեղապահ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մէջ

Խաղ Արքեպիսկոպոսի երկրորդ պաշտօնական այցը Մայր Աթոռ եղաւ 1954 թուին երբ մայիս ամսուն Ամենայն Հայոց Տ.Տ. Գէորգ Զ. Հայրապետը վախճանեցաւ, որուն յուղարկաւորութեան նախագահելու համար հրաւիրուած էր Գերագոյն Հոգեւոր Խորհուրդէն որպէս երիցագոյն բարձրաստիճան հոգեւորական: Խաղ Արքեպիսկոպոս կատարեց երջանկալի շատակ Հայրապետին վերջին օծումը՝ շրջապատուած ութ եպիսկոպոսներէ՝ բոլորն ալ ձեռնադրուած վախճանեալ Հայրապետին 1945 եւ 1951 թուականներուն: Այլապէս նաեւ իր աւանդապահ եւ պատկառելի ղեկավարութեան տակ Սրբազանը արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալեց Կիլիկիոյ Աթոռը պահելով բնականոն ընթացքի մէջ, երբ Դպրեվանքը տուաւ իր հունձքը, տնտեսապէս բարօր շրջան մը բոլորելով:

Խաղ Սրբազան Հօր Տեղապահութեան շրջանին, իր արտօնութեամբ եւ վերատեսուչ Դերենիկ եպիսկոպոս Փոլատեանի շնորհաբաշխութեամբ չորս տարիներու յաջորդականութեամբ ձեռնադրութիւն ստացան Վաչէ Յովսէփեան, Արտակ Մանուկեան, Գարեգին Սարգիսեան, Արտաւազդ Թրթռեան, Սահակ Այվազեան, Մեսրոպ Գրիգորեան, Գէորգ Կարապետեան, Ներսէս Բապուճեան եւ Զաւէն Արզումանեան արեղանները: Բոլորն ալ մեծանուն Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսին շնորհընկալները եղանք ու իր վախճանուէն ետք Խաղ Արքեպիսկոպոսի հայրախնամ վերատեսչութեան տակ ծաւալեցին: Խաղ Արքեպիսկոպոս կատարեց նաեւ յաջորդ Գիւտ արեղայ Նազգաշեանի ձեռնադրութիւնը:

Կաթողիկոսական Ընտրութեան Դարը

Տեղապահ Խաղ Արքեպիսկոպոս Աջապահեանի տարիներուն Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութիւնը յետաձգուելով ընտրապայքարի վերածուեցաւ, անլոյծ մնալով ընտրութեան կարեւորագոյն խնդիրը: Տեղապահ Սրբազանը քանիցս փորձեց, հրահանգեց, Միաբանական Ժողովներ գումարեց, որոնց ինքս ներկայ եղած էմ, եւ յանուն միաբանական ժողովին պատգամաւորներ ընտրել տուաւ Աթոռին ենթակայ չորս թեմերէն, Բերիոյ, Լիբանանի, Դամասկոսի եւ Կիպրոսի, որոնք որոշուած թուականին Անթիլիաս պիտի ժամանէին: Սակայն յետաձգումները ընդունելի չեղան եւ կուսակցական ներքին պայքարներ հարցը աւելի կնճռտեցին: Երեք տարիներու տատանումներէ ետք Խաղ Արքեպիսկոպոս Տեղապահի իր պաշտօնէն հրաժարեցաւ աւելի լաւ արդիւնք մը ակնկալելով: 1955 թուի Հոկտեմբերին Միաբանական Ժողովը Տեղապահ ընտրեց Լիբանանի թեմին Առաջնորդ Խորէն Եպիսկոպոս Բարոյեանը:

Կաթողիկոսական ընտրութեան շփոթին մէջ երբ Ամենայն Հայոց ՏՏ Վազգէն Հայրապետ ներ-

կայ եղաւ Անթիլիասի միաբանական Ժողովներուն, Խաղ Արքեպիսկոպոս Հայ Եկեղեցւոյ կանոնական միասնութեան գիծին վրայ անխախտ մնաց, միշտ կողքին Ամենայն Հայոց Հայրապետին: Չմասնացեցաւ ընտրութեան եւ կամ ընտրապայքարներուն՝ սպասելով աւելի խաղաղ օրերու: Իր կողքին մնացինք միաբաններուս մեծամասնութիւնը: Իր կեանքի վերջին տասնամեակին պատահեցաւ Սրբազան ԱԶԻՆ անյետացման տգեղ պատահարը երբ Խաղ Աջապահեան Սրբազան Մասունքներու Արկղը կը պահէր իր առանձնասենեակին մէջ տարիներէ ի վեր, ու ինք Գահիրէ մեկնած էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ մասնակցելու 1956 թուի Հայ Եկեղեցւոյ Եպիսկոպոսական Ժողովին: Տողերս գրողը Զաւէն արեղայ Արզումանեան, եգիպտահայտակ, ստիպուեցաւ Գահիրէ մեկնիլ անձամբ գրութիւն մը յանձնելու Խաղ Սրբազանին: Իրագեկ ըլլալով պատահածին Արքեպիսկոպոսը իսկոյն մեծ վրդովմով վերադարձաւ Անթիլիաս ստուգելու եղած ահաբեկչութիւնը միաբան վարդապետի մը կողմէ՝ իբր թէ խափանելու կատարուելիք կաթողիկոսական անկանոն ընտրութիւնը: Բարեբախտաբար ճիշդ տարի մը ետք գողերը վերադարձուցին Արկղը Սրբազան Հօր յախուռն կեցուածքին ու պահանջին վրայ:

Խաղ Արքեպիսկոպոսի Արժանիքը

Խաղ Սրբազան ձեռնհասօրէն գործակցած էր հինգ Կաթողիկոսներու՝ Տ.Տ. Սահակ Բ. Խապայեան, Բաբգէն Ա. Կիլիկեանի Աթոռակից, Պետրոս Ա. Սարաճեան եւ Գարեգին Ա. Յովսէփեանց Հայրապետներուն, որոնք միշտ յարգեր էին Մայր Աթոռի գերագահութիւնը: Որպէս պարտաճանաչ եւ աւանդապահ հոգեւորական անմիշտ ուզեց մնալ նոյն ուղիին վրայ, իր յաճախակի այցելութիւններով Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր գնաց երրորդ եւ չորրորդ անգամներ Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւերով:

1958 թուի իր այցելութեան, երբ տողերս գրողը Զաւէն արեղայ Արզումանեան եւս հրաւիրուած էր Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին կողմէ որպէս հոգեւոր հովիւ Եթովպահայ համայնքին, մեր մեծաւորը Խաղ Արքեպիսկոպոս, Վազգէն Հայրապետի արտօնութեամբ, վարդապետական մասնաւոր չորս աստիճանները շնորհեց իրեն ենթակայ երեք միաբաններուն՝ Գէորգ Կարապետեան, Զաւէն Արզումանեան եւ Գիւտ Նազգաշեան արեղաններուն, որոնց եւս Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհեց Հայրապետական Կոնդակ եւ Վարդապետական ակադեմիա լանջախաչ կրելու իրաւունք:

Աջապահեան Սրբազան վերջին անգամ Մայր Աթոռ հրաւիրուեցաւ որպէս նախադամ՝ մասնակցելու համար 1962 թուի Ազգային-եկեղեցական Ժողովին, ներկայացնելով Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, քանի որ Անթիլիաս ընթացք էր տուած իրենց ուղղուած հրաւերին: Մայր Աթոռի Գահակալ Տ.Տ. Վազգէն Ա. Հայրապետ իր

«Ինչու»-ների Պատերազմը

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

2ի գնահատումն ոչ ոքի»: ԱՄՍՈՒԷԼ ՋՈՆՍՈՆ

- Սկզբից ասեմ, որ այս նիւթի հեղինակը թոռս է՝ Շանթը, որ տարիներ առաջ, իւրաքանչիւր օր, ամէն վայրկեան եւ երկվայրկեան հոգիս հանում էր իր «ինչու»-ների տարափով:

- Պապիկ, ինչո՞ւ է լամպը վառուում...

- Որպէսզի լուսաւոր լինի:

- Ինչո՞ւ...

- Որպէսզի մութ չլինի եւ իրար տեսնենք:

- Այսինքն ուզում ես ասել իրար տեսնելու համար:

- Այո՞, սակայն ոչ միայն իրար տեսնելու, այլեւ կարողանանք տեսնել, մեր շուրջը, բնութիւնը, աշխարհը...

- Ինչո՞ւ...

Դէ արի ու այս «ինչու»-ների տակից դուրս արի: Եւ այսպէս շարունակ: Ակամայ, թոռս ինձ մտածել է տալիս մի շատ կարեւոր երեւոյթի մասին: Իսկապէ՞ս մենք կարող ենք պատասխանել բոլոր «ինչու»-ներին: Վերջին հաշուով՝ ոչ, չենք կարող, որովհետեւ ամէն մի պատասխան ծնում է մի նոր «ինչու»:

Օրինակ էք ուզում՝ խնդրեմ.

- Ինչո՞ւ է Հայաստանի վիճակը անմխիթար:

- Որովհետեւ անփորձ դեկավարներին ձեռքին է երկիրը:

- Ինչո՞ւ է նրանց ձեռքին:

- Որովհետեւ փորձուածները հիմնականում Հայաստանից դուրս են:

- Ինչո՞ւ են Հայաստանից դուրս:

- Որովհետեւ, մեղմ ասած՝ նրանց դուրս արին երկրից:

- Ինչո՞ւ դուրս արին...

... Եւ այսպէս՝ կարելի է «ինչու»-ներով հատորներ լցնել եւ արդիւնքում չենք գտնի «ինչու»-ի վերջնական պատասխանը:

«Ով գովում է բոլորին,»

Կրկին մէջտեղ եկաւ «ինչու»-ն: Որովհետեւ նման մարդը ընդհանրապէս ունակ չէ գնահատել ոչ լաւը եւ ոչ էլ վատը՝ ում արածն էլ որ լինի: Սովորաբար, գնահատելը կարողութեան չափանիշ է եւ ոչ թէ յատկութիւն:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ կարողութիւնը ձեռք ենք բերում սովորելով, աշխարհաճանաչմամբ մշտապէս սովորելու ձգտում է յայտ բերելով ամէն մի հարցում: Իսկ յատկութիւն՝ բոլորին է տրուած Աստուծոյ եւ բնութեան կողմից, որպէսզի այդ զգայարանի միջոցով կարողանանք այս կամ այն արարքի համար որեւէ մէկին գովել կամ փնտել: Ի միջի այլոց այդ զգայարանը շատ յաճախ է շահարկում հայերիս կողմից՝ տեղի անտեղի որեւէ մէկին գովելիս, թէ փնտելելիս: Այդ առումով էլ յաճախ են պատահում անհաճոյ դրսեւորումներ մարդկանց փոխարարբերութիւնների միջոց:

Առանց ծանրութեթեւ անելու, մենք լաւ գովել գիտենք, եւ թէ լաւ փնտելել ու շշպուել: Ուստի հրամայական է, որպէսզի մարդիկ հաշուի առնեն իրենց կարողութիւնների սահմանները ու ըստ այնմ կարողանան փոքրիշատէ ճշգրտօրէն ձեւակերպել իրենց ասելիքը դիմացինին արժեւորելիս: Տարածուած մտքեր են.

- Վա՛յ այն մարդուն, որի ետեւից չեն խօսում:

- Վա՛յ այն մարդուն, որի ետեւից միայն վատն են խօսում:

Իսկ մենք ասում ենք. Մարդու ետեւից պիտի խօսեն եւ լաւը, եւ վատը, որովհետեւ այդ անձը մէկի համար վատ է, միւսի համար լաւ, նախած թէ ում «ոտն է տրորել» եւ կամ ում «դունչը շոյել», - բա՛, այսպէս է կեանքը, էլ «ինչու»

մինչու» չկայ:

«Ամենամեծ կոյրը նա է, ով չի ուզում տեսնել»:

Ջ. ՍԿԻՖՏ

Անգլիացի նշանաւոր գրողի ասոյթը այս օրերին պիտի ձեւափոխել հետեւեալ կերպ. «Ամէնամեծ կոյրը նա է, ով նայում է, բայց չի տեսնում»:

Իմ այս միտքը վերաբերում է նրանց, ովքեր ամէն լաւի մէջ անգամ վատն են տեսնում, եւ որոնց աչքն էլ, տեսողութիւնն էլ անցնում է ստամոքսի միջով: Եւ սրանց մէջ կան այնպիսիներ, որոնց հայրենիքի կրթական հաստատութիւններում սովորեց-րել են, որ «մարդ ոչ միայն հացիւ, այլ բանիւ»:

«Ձարմանալու անընդունակ Մարդը թաղութան վիճակում է»:

ՀԵԳԷԼ

- Ահա մի ասոյթ, որ իմ սրտովն է: Գերմանացի փիլիսոփան էլ է «յայտնաբերել», որ կան մարդիկ, որոնք զարմանալու կարողութիւն չունեն: Ես մշտապէս ասել եւ կրկնում եմ, որ այսքան երկար տարիներ կարողանում եմ պարել այս օտար երկրում, որովհետեւ իւրաքանչիւր օր մի բան գտնում եմ զարմանալու համար: Լինի դա կենցաղում, առօրեայ կեանքում, արուեստում, գիտութեան, տեխնիկայի եւ այլ ճիւղերում: Ինքը՝ Միացեալ Նահանգներն արդէն զարմանքի նիւթ է՝ ներքին եւ արտաքին հակադրութիւնների մշտապէս հոսքով: Եւ ինչպէս կարելի է չզարմանալ այդ հոսքի մէջ ընթացող փոքր-մոքր շոյիչ, հաճելի առուակներով, որոնք մտնում են հոգուդ մէջ, շոյում ինքնասիրութիւնդ, առուակներ, որոնց շնորհիւ մարդը մարդ է գգում իրեն:

- Յոռի երեւոյթներ՝ իհարկէ կան, եւ ո՞րտեղ չկայ: Դրանցից մէկը հենց այն, որ ազգակիցը շահագործում է ազգակցին եւ, շատ անգամ ակելի անգլիօրէն, քան օտար-ը: Բա սա զարմանքի նիւթ չէ՞...:

Ձարմանքը, զարմանալու յատկութիւնը թեթեւացնում է մարդու միտքը, սրում երեւակալութիւնը, դիւրացնում օտար երկրում ապրելը: Միշտ պիտի զարմանալ, թէ՛ կուզանշան թուացող նոր երեւոյթի համար, բա զարմանալու բան չէ՞, երբ թոռդ հարցնում է.

- Պապիկ, ինչո՞ւ ես տխուր, աչքերդ էլ թաց են...

Բա դա զարմանալու բան չէ՞, երբ թոռնիկդ երեսիդ նայելով հասկանում է, որ ինչ որ վատ բան է կատարուում քո հետ:

- Բա ի՞նչպէս բացատրես նրան, որ այդ դու տառապում ես քիչ առաջ տեսածդ Պէյրուսի սրտածմիկ տեսարանների համար, քո հայրենակիցների դժբեմ ճակատագրի, ի վերջոյ Հայրենիքի անհեռանկար վիճակի համար:

«Մարդը թագաւորն է այն երկրի, որի վրայ ապրում է»:

ԺԱՆ ԺԱԿ ՌՈՒՍՍՕ

Ուշ միջնադարի ֆրանսիացի փիլիսոփա Ժան-Ժակ Ռուսսոն գիտէ՞ր արդեօք, որ իր այդ խորիմաստ միտքը մեզ՝ Սփիւռքում ապրող հայերիս համար չէ:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ, Սփիւռքի հայերից շատերն, իրոք ապրում են թագաւորի պէս, բայց իրենց թագաւոր չեն գգում:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ հայը որտեղ էլ ապրելիս լինի, թագաւորն է եր երկրի, իր հայրենիքի, թէեւ՝ շատ անգամ աղքատ թագաւոր:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ հայը մտքով, հոգով, նոյնիսկ իր թագաւորական կենցաղով ու վարքու-բարքով, յայտնի ու անյայտ թելերով կապուած է իր հայրենիքի հետ:

- Ինչո՞ւ:

- Վերջ «ինչու»-ներին, այդպիսին է ՀԱՅԸ, այդպիսին ենք մենք:

- Եղա՞ւ: Վերջ «ինչու»-ների պատերազմին:

Տերեւների Ջրոյցը

ՆԵԼԼԻ ԵՆՈՔԵԱՆ

Ինչո՞ւ ես այդպէս դողում, չե՞ս հասկանում, որ անհանգստացնում ես մեզ: Պատկերացրո՞ւ, եթէ բոլորս միասին սկսէինք դողալ, ինչ կ'անէր մեր ծառ մայրիկը:

- Եղբայ՛ր ջան, մի՛ նեղացիր: Երբ սարերի այն կողմից քամու ձայնն ականջիս է հասնում, ակամայից սկսում եմ դողալ. գիտեմ, որ մեզ վտանգ է սպառնում:

- Իսկ դու փորձիր չվախենալ: Երբ նա իր շունչն է տարածում, դու ամուր բռնիր մայրիկի ձեռքից: Այնպէս արա, որ նրան չնկատես. վեր մի՛ նայիր, պարզապէս մի վախեցիր: Գիտես, որ մայրիկը կարող է միայն մեր փոքրիկ քոյրերին ու եղբայրներին պաշտպանել, իսկ մենք պէտք է սովորենք նրա ձեռքերն ամուր բռնել:

- Դու ասում ես քամի: Իսկ չե՞ս վախենում, երբ տանտիրոջ երեխաներն են գալիս: Գիտե՞ս, մարդիկ ավելի անողոք են, քան բնութիւնը:

- Ճիշտ ես ասում, եղբայր: Երեկ մեր տանտիրոջ երեխաներն այնպէս էին կուռում, որ քիչ էր մնում յուզմունքից ցած ընկնէի: Նկատե՞լ ես, արդէն մի քանի օր է մայրիկը շատ տխուր է. տանտէրը որոշել է մայրիկին մէկ այլ ծառով

փոխարինել, նշանակում է...

- Երանի այսօր փոթորիկ լինի եւ մենք չզգանք դաժան կացնի հարուածները: Քոյրի՛կ ջան, արի՞ քեզ ամուր գրկեմ. մեր կեանքը մեր տէրերի որոշումից է կախուած:

- Եղբայ՛ր, չէ՞ որ բնութիւնն է մեզ ծնել, իսկ ինչո՞ւ են մարդիկ որոշում մեր ճակատագիրը, - թախածոտ ձայնով նրան հարցրեց քոյրը:

- Չգիտեմ, քոյրի՛կ... Գուցէ նրանից է, որ Աստուած է բոլորիս այդպէս ստեղծել: Եւ մենք ոչինչ չենք կարող փոխել, մնում է միայն հաշտուել:

- Իսկ ինչո՞ւ է մարդկանց մի մասին բարի ստեղծել, իսկ միւսին՝ անգութ:

- Քոյրի՛կ ջան, դու ինձ այնպիսի հարցեր ես տալիս, որ անգամ մայրիկը չի կարող պատասխանել:

- Իսկ է՛ս գիտեմ գաղտնիքը, - ծիծաղկոտ աչքերը վերջինիս յառեց քոյրը: Մենք կարող ենք մեր տէրերին համեղ պտուղներ տալ, եւ նրանց սրտերը կփափկեն, կուրախանան, որ իրենց դեղձներին քաղցր պտուղներ է տալիս:

- Դէ արի՛ քնենք. առաւօտեան մայրիկին կ'ասենք մեր գաղտնիքը: Իսկ հիմա ամուր փաթաթվիր ինձ ու ոչ մի բանից մի վախեցիր:

Արցախի Հանրապետութիւնը Իրողութիւն Ե

Շարունակուած էջ 7-էն

նուրոյն է, բայց՝ անտրոհելի եւ անքակտելի Հայաստանէն: Պիտի գայ օրը, երբ պիտի միանայ մայր հայրենիքին: Չմոռնանք որ 1988-ին դարաբաղեան շարժման կարգախօսն ու մղիչ ուժը «Միացո՛ւմ, միացո՛ւմ» էր: Աւելին, 2019-ին, Ստեփանակերտի մէջ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան իր հրապարակային ելոյթով, համահայկական խաղերու բացման առթիւ, յատկօրէն բանաձեւեց, հաստատեց եւ պնդեց՝ «Արցախը Հայաստան է եւ վերջ»...:

Արցախի Հանրապետութեան մէջ, Մարտ ամսին կատարուած նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններէն ետք, զգալիօրէն Հայաստանի եւ Արցախի դեկլարութիւնները կը համագործակցին օրինակելի համախոհութեամբ, զիրար սատարելու ոգիով եւ ամէն խոչընդոտ միասնաբար վերացնելու հաստատականութեամբ: Թէպէտ, չարամիտ տարրեր, երբեմն կը փորձեն պղտորել ջուրերը, որոմներ ցանել չարաբար, վէճեր յարուցել շիւ եւ աթոռամոռացական հաշիւներով, բայց նախագահ Արա Յարութիւնեան եկաւ վերջ տալու նման անհեթեթութեանց: Ահա թէ ինչու, սրտանց

կ'ողջունենք Նիկոլ Փաշինեան-Արա Յարութիւնեան միասնական քայլերը, համախորհուրդ մարտավարութիւնը, հեզընթաց աշխատելաժողով եւ ուսընդուս ընթանալու վեհանք վարքագիծը:

Այսօր, երբ կը տօնախմբուի 29-րդ տարեդարձը Արցախի Հանրապետութեան, կարելի չէ չչիշել այն անմնացորդ զոհողութիւնները, որ յանձն առին հայրենի ժողովուրդին բոլոր հատուածները՝ գիտութիւններէն մինչեւ մայրեր, կամաւորներ թէ բուժքոյրեր, մտաւորականներ թէ պատանիներ, ծերունիներ թէ բանուորներ ու մշակներ: Անոնց նուիրական երազը իրականութիւն է այսօր: Անոնց թափած արիւնն ու քրտինքը պտղաբերած է ազատ ու անկախ Արցախով՝ իր անկոտորում բանակով ու ժողովուրդով:

Այս առթիւ կը խոնարհինք յիշատակին առջեւ բոլոր անոնց՝ որոնք ինկան Արցախի ազատութեան ճանապարհին: Կ'ողջունենք Արցախի բանակն ու անոր քաջարի մարտիկները՝ մաղթելով անամպ եւ խաղաղ երկինք բազում փորձութիւններէ անցած արցախահայու թեան:

Կեցցէ՛ Արցախի Հանրապետութիւնը եւ բիւր ողջոյններ անոր 29-րդ տարեդարձին:

Կեցցէ՛ Արցախի Հանրապետութիւնը եւ բիւր ողջոյններ անոր 29-րդ տարեդարձին:

Զրադաշտականութիւն (Մագդեգականութիւն)



Նկարիչ Ռաֆայելի 1509 թուականի նկար, որտեղ Զրադաշտ ու Պտղոմէոս բանավիճում էին, Զրադաշտ պահում էր աստղագարդ գունդ

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ (Շարունակուած նախորդ թիւէն)

ՄԻԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԿՆԱՍՏՈՒԹԻՒՆ

Զրադաշտի ուսմունքի բացառապէս միաստուածութիւնը, ըստ երեւոյթին շփոթուել էր որոշ կրկնաստուածութեամբ: «Իմաստուն Տէր»ը (Wise Lord) ունէր հակառակորդ՝ Ահրիման (Ahriman) ու նրա չարութեան ուսմունքը: Ազատ կամքով այն ընտրած հետեւորդները նոյնպէս «չար» եղել: Այս բարոյագիտական կրկնաստուածութիւնը արմատացած եղել Զրադաշտական տիեզերաբանական սկզբունքում: Նա ուսուցանել էր, որ սկզբում երկու ոգիների մի հանդիպում եղել, որոնք ազատ եղել ընտրելու, Գաթա-ների (Gathas) օրհներգների ժողովածոյի) խօսքով, «Կեանք կամ Մահ» խօսքի լիցատակութեամբ: Այս նախատիպար ընտրութիւնը ծնունդ էր տուել Բարի ու Չար սկզբունքին:

Նախորդին համապատասխան «Բարին» արդարութեան եւ ճշմարտութեան թագաւորութիւն էր, իսկ «Չարը» ստի (Lie-Druij) թագաւորութիւն, որը բնակեցուած եղել դեւերով (daevas): Չար ոգիներով ուշագրաւ էին կանուխ ժամանակաշրջանի Հնդկա-իրանեան աստուածները: Ամէնայնդէպս, բարոյագիտական ու տիեզերական միաստուածութիւնը գերակայում էր կրկնաստուածութեանը, որովհետեւ Ահուրա Մազդան հայրն եղել երկու ոգիների էլ, միայն իրենց ընտրութեամբ ու իրենց կամքով բաժանուել երկու հակադիր սկզբունքների: «Իմաստուն Տէր»ը, Ամէշա Սպենտա-ի (amesha Spenta) հետ վերջապէս պարտութեան մատնել հակառակորդ Ահրիմանի «Չար ոգին»: Այդ պատգամը նշանակել էր, կրկնաստուածութեան սկզբունքի վերջը: Այն Զրադաշտի հիմնական կրօնական բարենորոգումն էր:

Զրադաշտի միաստուածութիւնը վճռում էր իրականացնելու նախկին խստապահանջ կրկնաստուածութեան լուծարումը: Ամէնայնդէպս, Զրադաշտից յետոյ կրկնաստուածութեան սկզբունքը աւելի ուշ ժամանակաշրջանում կրկին երեւացել: Այն կատարուել էր Ահուրա Մազդայի հաշուին, կոչուել՝ Օհրմազդ (Ohrmazd) եւ իջեցուել Զրադաշտի հակառակորդ՝ Ահրիմանի մակարդակին:

Վաղ ժամանակաշրջանի սկզբին, աշխարհը բաժանուած եղել «Բարի» ու «Չար» իշխանութիւններին: Իւրաքանչիւր մարդ այս երկուքի միջեւ պարտադրուել որոշելու իր կամքը: Նա ազատ էր ընտրելու իմաստուն Տիրոջը (Wise

Lord) կամ՝ էլ Ահրիման-ը (Ahriman): Նոյնը ճշմարիտ էր նաեւ հոգեւոր դասի համար, որոնք ըստ իրենց ընտրութեան «Բարի» կամ «Չար» էին: Մարդու ազատ կամքի որոշման կայացումից հետեւում էր, որ նա վերջապէս պատասխանատու էր իր ճակատագրի համար: «Բար»-ի արարքներով արդար անձնաւորութիւնը՝ Աշաւան (ashavan), վաստակում էր յաւիտենական վարձատրութիւն՝ անեղծութիւն ու անմահութիւն: Նա ով ընտրում էր «Սուտ»-ը, դատապարտուած էր իմաստուն Տիրոջը (Wise Lord) դատաստանով, իրեն համար կանխատեսուող թշուառ վերջով: Այդ կանխատեսումը ըստ երեւոյթին համապատասխանում էր քրիստոնէական դժոխքի պատկերին: Աւեստայի (Avesta) հաւատքից շեղում հնարաւոր չէր, երբ մարդը արդէն մի անգամ Այսպարած եղել իր որոշումը: Այսպէս, երկու աշխարհների բաժանուած թշնամական խմբեր, որոնց անդամները, ներկայացնում էին երկու պատերազմող կողմեր: «Իմաստուն Տիրոջ» կողմից հաստատուած խաշարածներ կամ հողագործ մշակներ ինքնակամ իրենց հողը ու արջառը ապրում էին սահմանուած ընկերային կարգով, իսկ «Ստի» (Lie-Druij) հետեւորդ գողամէտ վաչկատուն ցեղեր, թշնամի էին՝ երկրագործութեան առտնին տնտեսութեամբ զբաղուող ռանչպարներին, նմանը Հայաստանի «Դրացիներ»-ին: Սոյնին աւելացնում եմ, որ քրիստոնէական ուսմունքում, մի դրուագ կայ, որտեղ Ադամի եւ Եւայի որդիներից Կայենը Աստուծոյ նուիրել կենդանական ծագումով արտադրանք, իսկ Աբելը երկրագործական ծագումով արտադրանք: Աստուած առաւել հաւանել էր Աբելի նուէրը: Վրդովել էր Կայեն, սպանել եղբայր Աբելին, դառնալով մարդկութեան առաջին եղբայրասպան-մարդասպանը: Այս մէջբերումը նման է վերոգրեալին, երեւի մեր դարու մարդասպաններ, յափշտակիչներ նման էին վերոգրեալ ցեղի հետեւորդներին, Պէպո-ի երգած «խալխի դատած հաց ուտողներ»-ին: Գերմանացի Լեփսոս Էնվէրի հետ հանդիպման վերջին յուզախառն նրան կանչել՝ եթէ ապագային հարցնեն քեզ ո՞ւր է Աբել եղբայրդ, ինչ պիտի պատասխանես... լուել էր անարգը...:

ՎԱՆՃԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՎԵՐՉԻՆ ԴԱՍԱՍԱՆ

Վաղ անցեալի օրհներգներ, տարեղ, շարականներ (Gathas) որոնցից շատերը յօրինուած էին Զրադաշտի կողմից: Այնտեղ ներբեռնուած էին վախճանաբանական

խորհրդածութիւններ: Նրանց գրեթէ իւրաքանչիւր հատուածում կար որոշ մէջբերումներ մարդու յետ կեանքի ճակատագրի մասին: Այնտեղ արտայայտուած իւրաքանչիւր խօսք, մտածմունք եղել մարդու յետ մահու «Գոյութիւն» առեղծուածի մասին: Մարդու կեանքի երկրային վիճակը կապուած էր այն կողմի վիճակի հետ, որտեղ «Իմաստուն Տէր»ը պիտի վարձատրէր «բարի» գործերը, խօսքը, մտածումները եւ պատժէր յոռին: «Բարի»-ն կատարելու դրդապատճառը թւում է լինել Զրադաշտի մխրայում-պատգամում ամենայնուժեղ պիտանին, մատչելին:

Մահից յետոյ մարդու հոգին պիտի անցնէր Ռիգուայթր-Սինուան (Requiter-Cinvan) կամուրջի վրայով, որը ամէն մարդ մտապատկերում էր սպասումով, վիշտով ու սարսափով: Ահուրա Մազդայի կողմից կատարուած դատաստանից յետոյ «Բարի»-ն մնում է յաւիտենական հրճուանքի ու լոյսի թագաւորութիւնում, «Չար»-ը ճամբում սարսփի ու մթութեան շրջաններ: Այնուամենայնիւ Զրադաշտը գնում դրանից անդին, ծանուցանելով տեսանելի աշխարհի վերջնական փուլը՝ «Արարչագործութեան վերջին պտոյտքը»: Այս վերջին փուլում Ահրիմանը պիտի ոչնչացուի եւ աշխարհը հրաշալի կերպով պիտի վերանորոգուի ու բնակեցուի «Բար»-ու կողմից, որոնք պիտի ապրեն դրախտային երջանկութեամբ:

Զրադաշտականութեան վաղ ուսմունքը ուսուցանում էր մահացածների յարութիւնը, մի ուսմունք, որի համար որոշ հիմքեր կարելի է գտնել օրհներգների տաղերում, շարականներում: Հանգուցեալների յարութիւն առնելը, աշխարհի վերանորոգմանը շնորհուած վերջին իրագործումն է՝ «Իմաստուն Տէր»-ի հետեւորդներին:

ԶՐԱԿԱՇՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Օրհներգների ժողովածոյներում, Գաթա ներում (Gathas), Զրադաշտը մարդկային էակի դրութիւնը դիտում էր որպէս ճշմարտութեան (asa) եւ ստի (drui) միջեւ իմացական պայքար: Զրադաշտականութեան գլխաւոր մտապատկեր ճշմարտութիւնը, Ահուրա Մազդա-ն, Զրադաշտականութեան ամբողջ վարդապետութեան հիմնադրութիւնն է: Այն ճշմարտութիւնն է (asa), «Գոյ»-ի (գոյութիւն ունեցողի) եւ ազատ կամքի վիճակի: Այն, Զրադաշտի կրօնական փիլիսոփայութեան մեծագոյն նպաստն է: Ըստ նրան, մարդկութեան նպատակը, բոլոր ուրիշ արարչութիւնների նման, մարդու համար ճշմարտութիւն պահելն է: Այն, կեանքում մարդու գործունեայ մասնակցութիւնը արդիւնաւէտ դարձնող խոհերն, արարքներն են:

Զրադաշտեան փիլիսոփայութեան տարրերը արեւմուտք եմ մուտք գործել հրէականութեան ու միջին պղատոնականութեան ազդեցութեան միջոցով: Այն ճանաչուել է փիլիսոփայութեան զարգացման վաղ անցեալի գլխաւոր իրադարձութիւնը: Յունական դասական փիլիսոփայութեան շարքում Հերաքլիտուսը յաճախ վկայակոչուած է որպէս Զրադաշտի խորհրդածութիւնից ոգեշնչողը: Ժամանակակից Զրադաշտեանները յաճախ մտտնանշում են Զրադաշտի փիլիսոփայութեան եւ Սպինոզայի փիլիսոփայութեան (Spinoza) գաղափարների իրարում առնչութիւնը: Նա շատ ազդեցիկ եղել:

Զրադաշտը, այն տարածքում որտեղ քարոզել էր, իր քարոզչութիւններին հակադրուել էին քաղաքացիական ու կրօնական իշխանութիւններ: Թէեւ յայտնի չէ, այդ իշխանութիւնները իր հայրենի երկրի շրջանից, թէ խորագծի շրջանից էին:

Վստահ, Ահուրա Մազդայի կողմից իրեն ցուցաբերուած ճշմարտութեամբ, Զրադաշտը չէր տապալել վաղ իրանի բազմաստուածութեան հաւատքը, ամենայնդէպս Ահուրա Մազդա-յին դրել արդարութեան թագաւորութեան կեդրոնում, որը խոստանում էր անմահութիւն, մահուանից յետոյ յարութիւն առնել, երանութիւն ու երջանկութիւն շնորհել: Գոյութիւն ունեցող սոցիալ-տնտեսական արժէքների հիման վրայ փորձել էր բարեկարգել վաղ իրանեան հաւատքը: Զրադաշտի քարոզչութիւնը սկզբում նրանց կողմից դիմադրութեան հանդիպել որոնց կոչել էր «Ստի» հետեւորդ Դրեգւանտներ (Dregvant):

Ահուրա Մազդա, անմահութեան բարերարն էր: Զրադաշտի ուսուցումը կեդրոնացած էր Ահուրա Մազդայի սկզբունքի վրայ, որը բարձրագոյն Աստուածն էր եւ միայն նա արժանի պաշտամունքի: Գաթա-ների սուրբ գրութիւնների ժողովածոյի համաձայն նա արարիչն էր դրախտի ու երկրի եւ նիւթական ու հոգեւոր աշխարհի: Նա աղբիւրն էր լոյսի եւ նրա փոխաշորդականութեան, գերագոյն օրհնագիրը, բնութեան կեդրոնը, ինչպէս նաեւ բարոյական կանոնների ու ամբողջ աշխարհի դատաւորը: Բազմաստուածութեան տեսակը գտնուում էր նաեւ հնդկական Վեդա-ներում (Rig Veda), ունենալով նոյն կրօնական հեղուկարը, ինչպէս Գաթա-ներում էր: Նա չէր լիցատակել իրական աստուածութիւն, որը իբր կը բաժանէր Ահուրա Մազդայի իշխանութիւնը: Աւելացնում եմ, Անահիտ Դիցուհին հայերի մայրն էր, իրենց դիցաբանութեան երրորդութեան մասը, այն չէր կարող իրանահնդկական լինել, որոնց հաւատքներում իրական աստուածութիւն չկար:

Ահուրա Մազդա-ն շրջապատուած էր վեց կամ եօթը գոյացութիւններով, որը յետագայի Աւեստայում անուանուել Ամէշա-Սպանտա (amesha-spantas)՝ «Անմահների բարերարներ»: Այդ անունները յաճախ պատահում են Գաթա-ներում, որոնք բնութագրել էին Զրադաշտի խոհերը ու աստուծոյ մտապատկերը: Գաթա-ների բառերով Ահուրա Մազդա-ն հայրն էր Սուրբ Հոգու (Spenta Mainyu), Արդարութեան ու ճշմարտութեան (Asha Vahishta) Իրաւացի Մտածողութեան, (Vohu Manah) եւ Բարեպաշտութեան (Spenta Armaiti):

Այս խմբի այլ երեք էՌԻԹԻԻՆ-ները հաստատում են անձնաւորելու Ահուրա Մազդա-յին վերոգորուած որակները, որոնք Յանկալի իշխանութիւն էին (Khshathra Vairyu), Օգտաւետութիւն (Haurvatat) եւ Անմահութիւն (Amertat): Չի բացառուում, որ նրանք նոյնպէս Ահուրա Մազդա-յի արարածներն էին: Այդ հակների բարի որակներին նոյնպէս տիրանում էին Ահուրա Մազդա-յի հետեւորդները:

Այդ նշանակում էր, որ աստուածները եւ մարդկութիւնը կապուած էին ըմբռնելու նոյն բարոյական սկզբունքները: Եթէ անմահութեան բարերարը ցոյց էր տա-

Ազգերու Լիկա. Սպանիան Յաղթեց Ուկրաինային՝ 4:0, Գերմանիան Միաւորներ Կորցրեց, Օրուա Բոլոր Արդիւնքները

Ֆուտպոլի ՈւեֆԱ-ի Ազգերու Լիգայի Ա. դասակարգի չորրորդ խմբակի երկրորդ շրջանի մրցումներուն գծով Սպանիոյ հաւաքական ընդունեց Ուկրաինոյ ազգային խումբին եւ առաւելութեան հասաւ 4:0 հաշուով:



Սպանիոյ հաւաքականը 4 միաւորով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, Ուքրանիան երկրորդն է՝ 3 միաւորով:

Գերմանիոյ հաւաքականը հիւրընկալուեցաւ Զուիցերիոյ կողմէ ու բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով՝ 1:1: Գերմանիան 2 միաւորով երրորդ տեղը կը զբաւէ, Զուիցերիան կ'եզրափակէ աղիւսակը՝ 1 միաւորով:

Միւս խաղերուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Բ. Դասակարգ երրորդ խմբակ
- Սերբիա - Թուրքիա՝ 0:0
- Հունգարիա - Ռուսաստան՝ 2:3
- Չորրորդ խմբակ
- Իռլանդիա - Ֆինլանդիա՝ 0:1
- Ուելս - Պոլկարիա՝ 1:0
- Գ. Դասակարգ երրորդ խմբակ
- Քոսովօ - Յունաստան՝ 1:2
- Սլովենիա - Մոլդովա՝ 1:0
- Դ. Դասակարգ
- Առաջին խմբակ
- Մալթա - Լատվիա՝ 1:1
- Անդորրա - Ֆարերեան կղզիներ՝ 0:1

Լիոնել Մեսին Յայտարարած Է, Որ Չի Յեռանար Կատալոնական Ակումբէն

«Պարսելոնայի» արժենթինացի յարձակող Լիոնել Մեսին յայտարարած է, որ չի հեռանար կատալոնական ակումբէն, քանի որ այդ հնարաւորութիւնն իրեն չեն տուած:

«Ես դժգոհ էի եւ կը ցանկայի հեռանալ: Ինձ թոյլ չտուին: Ակումբի նախագահը յայտնեց, որ միայն 700 միլիոն եւրօ վճարելու պարագային կարող եմ հեռանալ:

Կը մնամ, որպէսզի չյայտնուիմ դատերու մէջ: Ես երբեք չեմ երդար դատարան «Պարսելոնայի» դէմ, քանի որ ես կը սիրեմ այս ակումբը, որ տուած է ինձի ամէն ինչ:

Երբ ընտանիքիս յայտնեցի Պարսելոնայէն հեռանալու ցանկանութեան մասին, անոնք արտասուեցան:

Բայց ես դէպի առաջ կը նայի: Ես կը ցանկամ խաղալ ամենաբարձր մակարդակի վրայ, նուաճել տիտղոսներ, մրցունակ ըլլալ Ախոյեաններու լիգայի մէջ», - Մեսիի խօսքը կը մէջբերէ Goal.com-ը:

Մեսիի պայմանագիրը «Պարսելոնայի» հետ նախատեսուած է մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը:

Լուիս Սուարէսն Ընդունած Է «Եուվենտուսի» Առաջարկը

«Պարսելոնայի» ուրուրգուացի յարձակող Լուիս Սուարէսը համաձայնութեան եկած է Իտալիոյ ախոյեան «Եուվենտուսի» հետ՝ ընդունելով թուրինեան խումբի առաջարկը:

«Եուվենտուսը» Լուիս Սուարէսին առաջարկած է 3 տարուայ պայմանագիր՝ տարեկան 10 միլիոն եւրօ աշխատավարձով: «Պարսելոնայի» Սուարէսի աշխատավարձը կը կազմէր տարեկան 15 միլիոն եւրօ:

Այժմ պէտք է համաձայնութեան հասնին ակումբները: Transfermarkt-ը 33-ամեայ ֆուտպոլիստի փոխադրումը կը գնահատէ 28 միլիոն եւրօ:

Լուիս Սուարէսը 2014-ին «Լիւքսմբուրգի» «Պարսելոնա» տեղափոխուած էր 82 միլիոն եւրօով:

Թոքիոյի Օլիմպիական Խաղերը Անպայման Կը Կայանան

Կորոնավիրուսը չազդեր Թոքիոյի Օլիմպիական Խաղերու անցկացման վրայ: Այդ մասին յայտարարած է Միջազգային Օլիմպիական Կոմիտէի (ՄՕԿ) փոխնախագահ Ճոն Գոուլթը:

«Օլիմպիական Խաղերը անպայման կ'անցկացուին, ըլլայ դա կորոնաճահրով կամ առանց անոր: Խաղերը կը սկսին յաջորդ տարուայ Յուլիսի 23-ին: Այս կ'ըլլայ ամենամեծ յաղթանակը COVID-19-ի նկատմամբ:

Այժմ անհրաժեշտ է դիտարկել բոլոր այն հակաքայլերը, որոնք կը պահանջուին խաղերը անցկացնելու համար: Որոշ երկրներ այդ ժամանակ հաւանաբար կը վերահսկեն կորոնաժահրի հետ կապուած իրավիճակը, միւսները՝ ոչ: Բնականաբար, մարզիկները ժամանելու են աշխարհի տարբեր երկրներէն, ուստի կազմակերպիչները արդէն հիմա կանգնած են բազմաթիւ խնդիրներու առջեւ», - ՄՕԿ-ի փոխնախագահի խօսքերը մէջբերած է AFP գործակալութիւնը:

Ազգերու Լիկա. Դայաստանի Առաջին Յաղթանակը



Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքական առաջին յաղթանակը արձանագրեց Ազգերու Լիգայի Գ. դասակարգի երկրորդ խմբակէն ներս:

Երկրորդ շրջանի խաղերուն գծով հայկական թիմը Երեւանի Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտին վրայ ընդունեց Էստոնիայի հաւաքականին եւ վստահ յաղթանակ տարաւ 2:0 հաշուով:

Սպանացի անուանի մասնագէտ Խոակին Կապառուսի առաջին յաղթանակն էր այս՝ Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչի պաշտօնին վրայ:

Առաջին շրջանի խաղին Հայաստան հիւրընկալուեցաւ Հիւսիսային Մակեդոնիայէն եւ պարտութիւն կրեց 1:2 հաշուով:

Սպանացի Խոակին Կապառուսի ղեկավարած խումբը կոլբաց թողեց 5-րդ րոպէին: Խումբի աւագ, պաշտպան Վարազդատ Հարոյեանի խախտումէն յետոյ 5-րդ րոպէին 11 մեթրանոց նշանակուեցաւ Հայաստանի հաւաքականի մէջ նորամուտը նշող Դաւիթ Յուրչենկոյի պաշտպանած դարպասին: Կոլի հեղինակ դարձաւ յարձակող Էգգիեան Ալիոսկին:

36-րդ րոպէին սեփական տուգանային հրապարակին մէջ կանոնները խախտեց պաշտպան Յովհաննէս Համբարձումեանը: 11 մեթրանոցն արդիւնաւէտ իրացրեց յարձակող Իլիյա Նեստորովսկին:

Երկրորդ խաղակէսն աւելի ակտիւ սկսեցին Հայաստանի հաւաքականի ֆուտպոլիստները, որոնք մի քանի գրոհ կազմակերպեցին, սակայն գրաւել մրցակցի դարպասը չկարողացան:

Աւելացուած չորրորդ րոպէին կանոնները խախտեցին Բալեկեանի նկատմամբ: Բարսեղեանը դիպուկ իրացրեց 11 մեթրանոցը:

Յիշեցնենք, որ երկրորդ խումբին մէջ ընդգրկուած են նաեւ Էսթոնիայի եւ Վրաստանի հաւաքականները:

Forbes. Մարգաշխարհի 5 Ներկայացուցիչ Ընդգրկուած Է Ամենաբարձր Վարձատրուող Յայտնի Մարդկանց Ցուցակին



Հարուստ տղամարդկանց վարկանիշի մէջ, որ ընդգրկուած են երգիչներ, արուեստագէտներ, դերասաններ, մարզիկներ, հեռուստահաղորդավարներ, ռեփեր Քանյէ Ուեսթըրը գլխաւորեցած է առաջին տեղը՝ 170 միլիոն եւրօ եկամուտով:

Երկրորդ տեղը գոլիցերիացի թենիսիստ Ռոջեր Ֆեդերերն է, որ վաստակած է 106,3 միլիոն տոլար, երրորդը՝ «Եուվենտուսի» յարձակող Կրիշտիանու Ռոնալդուն (105 միլիոն տոլար), չորրորդը՝ «Պարսելոնայի» խաղցող Լիոնել Մեսսին (104 միլիոն տոլար): Հինգերորդ տեղը բաժին հասած է դերասան եւ ռեժիսոր Թայլըր Փերիին (97 միլիոն տոլար):

Յաջորդը ՊՍԺ-ի յարձակող Նեյմարն է (95,5 միլիոն տոլար), շուտեմէ Հովարդ Ստերնը (90 միլիոն տոլար), NBA-ի աստղ Լեբրոն Ջեյմսը (88,2 միլիոն տոլար) եւ դերասան Տուսին Ճոնսընը (87,5 միլիոն տոլար): Լաւագոյն տասնեակը կ'եզրափակէ հասարակական գործիչ եւ քաղաքական մեկնաբան Ռաշ Լիմբոն (85 միլիոն տոլար):

Յիշեցնենք, որ Թոքիոյի ամառային օլիմպիական Խաղերը պէտք է կայանային այս տարուայ ամբարնը, սակայն կորոնաժահրի համաճարակի պատճառով յետաձգուեցան:

ՄՕԿ-ի նոր որոշմամբ խաղերը պէտք է տեղի ունենան 2021 թուականի Յուլիսի 23-էն Օգոստոսի 8-ը:

Ջրադաշտականութիւն

Շարունակուած էջ 17-էն

լիս աստուածութեան գործը՝ միեւնոյն ատէն հաստատում հետեւորդների հետ կապը:

«Իմաստուն Տէր»-երի (Wise Lords) այնուհետեւ Ահուրա Մազդա-յի աշխարհները եւ նրանց հետեւորդները՝ Աշատա (Ashata) միանում իրարու: Այն, Շրադաշտի յետնեալ կերպարանքն է ցոյց տալիս: Իշխանութիւն (Kshathra) մտապատկերը, որին ընկերակցում էր «Յանկալի» ածականը, տակաւին գալու թագաւորութիւնն է:

Գրում եմ Ջրադաշտի մասին, որպէս հին դարերի մի հսկայ անհատականութիւն, որի արարած իմաստութեանը դեռեւս հաւատք ընծայողների հաւաքականութիւններ կան իրանում եւ այլուր, որոնց հետեւորդները այնտեղ համայնք են համարուում: Այն առնչուել էր նաեւ արմինների հին հաւատքի եւ Արմինայի ու Իրանի պատմական յարաբերութիւնների հետ: Կոիւ տուին գերագանցապէս գիտուած մի բանակի դէմ, պարտուեցին, սակայն նրանից երեսուն տարիներ յետոյ Վասանանց ազգային շարժումով յաղթանակեցին, իրանը հրաժարուեց Հայաստանին պարտադրել Ջրահա-դաշտական հաւատքը: Այս գրութիւնը Ջրադաշտականութեան մասին համառօտ պատում է, առանց այդ տեսութեան մեկնաբանութեան: Հայաստանում մշակոյթի աւելումով, դժուար է իրանի պատմական աղբիւրներում առնչութիւններ գտնել նրանց հաւատքի ու հայոց հին հաւատքի միջեւ: Ես, գրադաշտականութիւնը փառաբանելու համար չէր, որ այս թարգմանութիւնը կատարեցի, պարզապէս հին դարերի մշակոյթի պատում է այն ...: Ճշմարտութիւնը դաւանել:

ՋՐԱԴԱՇՏԸ ԵՒ ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ
Եւրոպացիների կողմից Ջրադաշտը պատկերելու ամենանշանաւորներից է «Աթէնքի Դպրոցի» 1509 թուականի Ռաֆայելի գծած պատկերը, որտեղ Ջրադաշտը եւ Պտղոմէոսը (Ptolemy) բանավիճում են՝

ԱՂԱՆԴԱՄՈՂՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ջրադաշտը (Zarathushtra) արգելել էր Ահրիմանի (Ahriman) պատուին կատարուած բոլոր գոհաբերութիւնները: Դեւերը (daevas), նախագահողաշտական ժամանակներից սկսած այլասերուել էին չարակամ աստուածութիւնների: Կրօնական գերակայ ծէսերի սովորութիւնների կատարման ատէն, Ջրադաշտը գտել էր, որ արջաուի գոհաբերութեան կիրառութիւնը, նոր ժամանակների մատաղի օրհնութեան կատարում, միացած գինովութիւն առաջացնող խմիչքների գործածութեան հետ (Haoma), պատճառել էր բազմասկան չափազանգութիւններ, գինարբուք:

Ջրադաշտը, իր բարեկարգումներում ամբողջապէս չէր ջնջել կենդանիների գոհաբերութեան ծէսը,

միայն ջնջել էր նրան ուղեկցող բազմասկան խնճոքների ու գինովցնող խմիչքների օգտագործման արարողութիւնների կատարումը: Արջաուի գոհաբերութեան կիրառումը (Haoma) համարել էր որպէս խորհրդանշական մի ընծայի նուիրում, որը կարող էր բազմապիսի լինել նաեւ չգինովցնող խմիչքներից: Ջրադաշտը պահպանել էր կրակի նախկին պաշտամունքը: Այդ պաշտամունքի տարբեր արարողութիւնները հետագայում ծաւալուել էին մոգերի քահանայական կարգի կողմից շնորհուած կանոններով: Կրակի կեղրոնը եղել «Կրակի Տաճար»-ում: Մոգերի քահանայական ծառայութեան համար սահմանուել էր կանոն «Տաճարում մշտնջենական կրակի բոցի պահպանում»-ը:

ՎԱՆՃԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ: ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍԱՆ

Վաղ անցեալի օրհներգներ, տաղեր, շարականներ (Gathas) որոնցից շատերը յորինուած էին Ջրադաշտի կողմից: Այնտեղ ներբեռնուած էին վախճանաբանական խորհրդածութիւններ: Նրանց գրեթէ իւրաքանչիւր հատուածում կային որոշ մէջբերումներ մարդու յետ կեանքի ճակատագրի մասին: Այնտեղ արտայայտուած մտածմունքներից եղել նաեւ մարդու յետ մահու «Գոյութիւն» առեղծուածի մասին: Մարդու կեանքի երկրային վիճակը կապուած էր այն կողմի վիճակի հետ, որտեղ «Իմաստուն Տէր»ը պիտի վարձատրէր «բարի» գործերը, խօսքը, մտածումները եւ պատժէր յոռին: «Բարի»-ն կատարելու դրդապատճառը թուում է լինել Ջրադաշտի պատգամի ամենայ պիտանին, մատչելին: Մահից յետոյ մարդու հոգին պիտի անցնէր Ռիգուայթր-Սինուան (Requiter-Cinvan) կամուրջի վրայով, որը ամէն մարդ մտապատկերում էր սպասումով, վիշտով ու սարսափով: Ահուրա Մազդա-յի կողմից կատարուած դատաստանից յետոյ «Բարի»-ն մնում էր յաւիտենական հրճուանքի ու լոյսի թագաւորութիւնում, «Չար»-ը ճամբում սարսափ ու մթութեան շրջաններ: Այնուամենայնիւ Ջրադաշտը գնում նրանից անդին, ծանուցանելով տեսանելի աշխարհի վերջնական փուլը՝ «Արարչագործութեան վերջին պտուղը»: Այս վերջին փուլում Ահրիմանը պիտի ոչնչացէր, աշխարհը հրաշալի կերպով պիտի վերանորոգուէր ու բնակեցուէր «Բարի»-ի կողմից, որոնք պիտի ապրէին դրախտային երջանկութեամբ:

Ջրադաշտականութեան վաղ ուսմունքը ուսուցանում էր մահացածների յարութիւնը, մի ուսմունք, որի համար որոշ հիմքեր կարելի է գտնել օրհներգների տաղերում, շարականներում: Հանգուցեանքների յարութիւն առնելը, աշխարհի վերանորոգմանը շնորհուած վերջին իրագործումն էր շնորհուած՝ «Իմաստուն Տէր»-ի հետեւորդներին:

Հին ԴԱՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ
Յոյները հասկացել էին, որ

Ջրադաշտը մարգարէն ու հիմնադիրն էր իրանեան ժողովուրդների հաւատքի: Նոյնը հաւաստել էին Պլուտարքոսը (Plutarch), Դիօգինեսը (Diogenes) եւ Ագատիասը (Agathias): Նրանք, Ջրադաշտին անդրադարձել էին իրենց դարաշրջանից առաջ ականդուած պատմաների հետքերով: Նրան համարել էին Բակտիայցի (Bactea) կամ Բաբելոնացի (Babilon) եւ նաեւ այնտեղի ուսուցիչ: «Նոր Պիթագորեան» (Neopythagorean) գիտնական լինելու համար մատնանշել էին նրա ժամանակաշրջանում գիտութեան նահանջը:

Այնուամենայնիւ, առաւելապէս կարեւորը Ջրադաշտի նկարն էր, նրան համարելու համար կախարդ աստղագէտ ու նաեւ հիմնադիրը աստղագիտութեան ու մոգութեան: Այդ նկարից էր ծագել նրան վերագրուած գանգուածային գրական երկերի ստեղծումը: Այն շրջաբերուել էր Միջերկրական ծովի շրջանի երկրներում, ք.ա. երրորդ դարից մինչեւ հին դարերի վերջը ու դեռ նրանից այն կողմը: Յոյները նրան համարել էին լինելու լաւագոյնը, որպէս տարաշխարհիկ իմաստութեան անձնաւորութիւն:

Այդ գրականութեան լեզուն առաւելաբար Յունարէն էր, թէպէտեւ տարբեր ժամանակի հանգրուաններում նաեւ Արամէէրէն (Aramaic), Ղպտի (Coptic) եւ Լատիներէն (Latin) լեզուներով: Նրա գրի կերպարը (Matrix) նոյնպէս Հելլենիստական էր (Hellenistic): Նրան վերագրուած գրականութեան քաղաքական ու մշակոյթային կառուցուածքը, ուրիշ ազգերից էր փոխարուած: Ջրադաշտը պարական մոգերը այն չէին յորինել:

Մոգերի ուսմունքը գոլգորդուել էր յունական մոգութեան հետ, Ջրադաշտն էլ նաեւ հակուել էր փոխակերպուելու մոգ-ի: Առաջին դարի անուանի մոգ Պլինի-ն (Pliny) Ջրադաշտին համարել էր մոգութեան հիմնադիր: Այնտանքի բաժանման սկզբունքի համաձայն, Ջրադաշտին ազատել էին հռովմէական, յունական աշխարհներում նախկին դարերի արուեստների ցուցադրութեան առաջնորդի պատասխանատուութիւնից: Այդ տարակուսելի պատիւը իրականում պատկանել առասպելական մոգ Օստանէս-ին (Ostanes): Նրան վերագրուել մոգական կեղծաթղ գրականութեան յորինումը:

S. Խաղ Արքեպիսկոպոս Աջապահեան

Շարունակուած էջ 15-էն

հանդիպումներու ընթացքին յատուկ յարգանք կ'ընծայէր Խաղ Արքեպիսկոպոսին, գինք նկատելով «Չեմ պաշտպանը Մայր Աթոռի Հայրապետութեան հեղինակութեան, Հայ Եկեղեցու միութեան եւ անբաժանելիութեան սկզբունքին»: Նոյն տարուոյ Մարտ 22 թուականի նամակով վեհափառ Կաթողիկոսը համակրանք եւ յարգանք կը յայտնէր նախկին Տեղապահ Խաղ Արքեպիսկոպոսին երբ կը գրէր՝ «Կը գնահատենք Ձեր ուղիղ կեցուածքը

Թէեւ Պլինի (Pliny) Ջրադաշտին համարում էր մոգութեան ստեղծողը, սակայն հռովմէացիները նրան չէին կամեցել կոչելու՝ «Մոգական Անձ» (Magician's Persona): Վաղ ժամանակ ատէն ոչ կարեւոր համարուած մոգութեան ուսմունքը՝ վերագրուել էր Ջրադաշտին: Իր ատենին, աստղագիտութեան հետ առնչուած կարեւոր մէկ իրողութիւն նրա անունով չի շատակուել: Նրան նուիրուած աստղի գոհաբերութեան հետ, յոյների դատողութեամբ Ջրադաշտի անձը միեւնոյն ատէն նոյնացուել անհատի պաշտամունքի նուիրման հետ, նոյնիսկ իրական աստղ համարուելու վկայութեան հետ: Ջրադաշտի մասին նման մտքեր երեւացել էին նաեւ վաղ քրիստոնէական գրականութեան երկերում, սկսելով Կլեմենտին Հոմիլի-ից (Clementine Homily), որը գուգահեռաւանդութիւնների շարքով Նեմրոդի (Nemrod) հետ Ջրադաշտին նոյնացրել որպէս աստղագիտութեան հիմնադիր, նոյնիսկ որպէս փայլատակող աստղ: Այլ տեղութիւններով Նեմրոդ մահացել էր կայծակահարութեամբ, պարսիկների կողմից յետ մահու աստուածացուել: Աստղագիտութեան հետ Ջրադաշտին գուգորդուել երկրորդ ու առաւել լուրջ իրողութիւնը շրջանառուած այն տեղեկութիւններն էին, որ Ջրադաշտը Բաբելոնացի եղել: Յունականի փոխակերպուած Ջրադաշտի անունը (Zoroaster-zaradas-zaratos) Ջորոաստր-Ջարադաս-Ջարատոս-ի, այնպէս նաեւ ըստ Բիդէսի 'ու, Կումօնտ-ի (Bides, Cumont) Ջրադաշտի սեմական անուան նմանութիւնները հաստատում էին, որ Ջրադաշտը Բաբելոնացի էր: Փիթակորասի (Pythocor) մասին եղած մի աւանդութեան համաձայն «Մաթեմատիկոս»-ը Բաբելոնում ուսանել էր Ջրադաշտի հետ: Աստղագէտ Լիդոսը (Lydos) «Եօթ օրեայ շաբաթ»-ի ստեղծումը վերագրել էր Ջրադաշտի Բաբելոնեան շրջանին, այդ ատէն յայտնի եղել, որ արեւի շուրջը միայն Եօթը մոյորակներ շրջան անում: Սուդաս-ի (Suda's) հրատարակած աստղագիտութեան գրքի մի ենթավերնագրում նշել էր, որ բաբելոնացիները Ջրադաշտից էին սովորել աստղագիտութիւնը:

(Շարունակելի 2)

Յաւակցական
Գալուստ Մկրտչեանի մահուան տիւրը աւիթով «Մասիս»ի վարչութիւնն ու անձնակազմը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս զակիրն՝ Արնօ Մկրտչեանին եւ ընտանիքին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Ժամկետը լրանում է: Լրացրու 2020 մարդահամարի հարցաթերթիկն այսօր:

Քո պատասխանները կօգնեն որոշելու, թե ուր պետք է հատկացվեն առողջապահության, արտակարգի իրավիճակների ծառայությունների և կրթության համար նախատեսված միլիարդավոր դոլարներն ամեն տարի՝ հաջորդ տաս տարվա ընթացքում: Եթե չես լրացրել մարդահամարի հարցաթերթը, ապա հաշվառողը կմոտենա քեզ օգնելու համար՝ դիմակ կրելով և հետևելով տեղական կանոնակարգերին, որպեսզի ապահովի յուրաքանչյուրի անվտանգությունը:
**Մարդահամարի հարցաթերթը առցանց լրացնելու կամ փոստով այն ուղարկելու համար դեռ ժամանակ կա:
 Իմացիր ավելին 2020census.gov/hy կայքից:**

2020CENSUS.GOV/hy

Վճարված է ԱՄՆ-ի Մարդահամարի Բյուրոյի կողմից

**Shape
your future
START HERE >**

United States®
**Census
2020**